



«ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ»

**«ՀՀ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐ»:
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ**

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ՝
ՀԱՆՐԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 2026

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունն իրականացրել է «Ազգային կրթության խորհուրդը»՝ ամբողջապես անվճար՝ ելնելով ազգային իրական սպառնալիքների գնահատման անհրաժեշտությունից:

Հետազոտության իրականացման կառավարումը և ամփոփիչ փորձաքննությունն ապահովել է «Հայոց Աշխարհաժողով» ազգային-ազատագրական հայրենաստիրական շարժումը:

Հետազոտության նպատկն է. գիտական մեթոդաբանությամբ բացահայտել, գնահատել և հանրայնացնել Հայաստանի Հանրապետությունում 2026 թվականին նախատեսվող թվով 231 դպրոցների փակման իրական պատկերը և հետևանքները:

Առաջադրված նպատակին հասնելու համար առնաձևացվել են հետազոտական ներքոհիշյալ խնդիրները և շերտերը.

- ❖ Բացահայտել փակման ենթակա դպրոցների աշխարհագրական պատկերը՝ ըստ ՀՀ մարզերի,
- ❖ Վերլուծել փակման ենթակա դպրոցների աշակերտական, ուսուցչական, սպասարկող համակազմի վիճակագրական ցուցանիշները,
- ❖ Գնահատել փակման ենթակա դպրոցների բնակավայրերի տարաբնակեցման առանձնահատկությունները՝ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային կարգավիճակներին համապատասխան,
- ❖ Գնահատել փակման ենթակա դպրոցների բնակավայրերի ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները,
- ❖ Ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, կրթական և անվտանգային տեսանկյունից գնահատել դպրոցների փակման հետևանքներն ու առաջացող սպառնալիքները,
- ❖ Մոդելավորել դպրոցների փակման գործընթացի կասեցման հնարավոր գործողությունները:

Մեթոդոլոգիական հիմքը - ՀՀ-ում փակման ենթակա 231 դպրոցների վերլուծությունը իրականացվել է բազմաշերտ մոտեցմամբ՝ հաշվի առնելով.

- Տարածքային բաշխվածությունը (մարզեր, համայնքներ, բնակավայրերի տիպեր)
- Կարգավիճակային բնութագրերը (սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային)
- Ժողովրդագրական ցուցանիշները (աշակերտների, ուսուցիչների, անձնակազմի թվաքանակ)
- Սոցիալ-տնտեսական պարամետրերը (գյուղատնտեսական հանդակներ, աշխատատեղեր)

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը – Հետազոտության տեսական հիմքը կառուցվել է, ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության և ՀՀ ԿԳՄՍ

նախարարի համապատասխան որոշումների ու հրամանների, emis.am հարթակի տվյալների բազայի, բնակչության և բնակավայրերի տարաբնակեցման հիմնախնդիրների, միգրացիոն տեղաշարժերի, վերջիններիս հետևանքով առաջ եկող ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, անվտանգային մարտահրավերների ուսումնասիրության գիտական մեթոդաբանության բազմակողմանի վերլուծության և մոդելավորման վրա:

Սույն հետազոտությունը կարող է տեսամեթոդական հիմք հանդիսանալ փակվող դպրոցների հետևանքով (ոչ միայն) ՀՀ-ի դեմ ծառայած մարտահրավերի ու սպառնալիքների հետագա ուսումնասիրման և գնահատման համար: Սակայն, սույն հետազոտության կարևորությունը հատկապես ընդգծվում է գործնական տիրույթում՝ հիմք հանդիսանալով համապատասխան գործընթացը կասեցնելու գաղափարական, քարոզչական, քաղաքական և ազգային գործընթացներ կազմակերպելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲԱԺԻՆ 1-ԻՆ - ՀՀ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԱԾՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ -----	5
2. ԲԱԺԻՆ 2-ՐԴ - ՀՀ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ -----	11
3. ԲԱԺԻՆ 3-ՐԴ - ՀՀ-ՈՒՄ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԲԱԶՄԱԶՍՓ ԳՆԱՀԱՏՈՒՄ -----	35
4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ -----	43

ԲԱԺԻՆ 1-ԻՆ

ՀՀ ՓԱԳՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Ինչպես ներածական բաժնում շեշտադրվեց սույն հետազոտությունն իրականացվել է «Ազգային կրթության խորհրդի» կողմից, որի նպատակն է բացահայտել Հայաստանում նախատեսվող դպրոցների լուծարման գործընթացի հետևանքները, որն ըստ էության կարելի է գնահատել ոչ միայն որպես կրթական միջավայրի ոչնչացման հետևողական գործընթաց, այլև՝ լրջագույն սպառնալիք ՀՀ ժողովրդագրական և ֆիզիկական անվտանգության տեսանկյունից:

Ըստ ԿԳՄՍ նախարարի 11.09.2023 թվականի No 1719-Ա/2 հրամանի, «ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման»¹ ծրագրի քողի տակ նախատեսվում է լուծարել թվով 232 հանրակրթական դպրոց՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Նույն նախարարի մեկ այլ հրամանով² արդեն իսկ հաստատված ցանկից ուժը կորցրած է ճանաչվել 28-րդ կետը, որը վերաբերում է ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Արևաբույրի Հ. Թադևոսյանի անվան միջնակարգ դպրոցին:

Այսպիսով, այսօր կատարման ենթակա է 231 պետական հանրակրթական հաստատությունների-դպրոցների լուծարման հրամանը՝ ՀՀ ողջ տարածքում: Ակնհայտ է, որ այս գործընթացը վերաբերում է ոչ միայն կրթական միջավայրին, այլև իր մեջ պարունակում է սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական և անվտանգային լուրջ սպառնալիքներ:

Մասնավորապես, լուծարման ենթակա 231 հանրակրթական դպրոցների 94,5 %-ը (231-ից՝ 218-ը) միակն են տվյալ բնակավայրում և սույն ցուցակում ընդգրկված միայն 13 դպրոց եզակի չեն տվյալ բնակավայրի համար:


Փակման ենթակա դպրոցների ամենամեծ բաժինը վերաբերում է Սյունիքի և Շիրակի մարզերին՝ 48-ական դպրոց: Այս երկու մարզերը Լոռու հետ միասին ընդգրկում են փակման ենթակա դպրոցների շուրջ 2/3-ը (գծապատկեր 1): Ընդ որում, փակման ենթակա դպրոցներում աշակերտական ամենամեծ մասնաբաժինն ունի Շիրակը՝ 1622 աշակերտ, իսկ երկրորդ ցուցանիշը՝ Լոռիում է՝ 1607 աշակերտ: Այս ցուցանիշով առաջին եռյակը եզրափակում է Սյունիքը (978 աշակերտ), որին հաջորդում է Արագածոտնի մարզը՝ 870 աշակերտ³:

¹ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում ներառված պետական ուսումնական հաստատությունների ցանկը հաստատելու մասին» 11.09.2023 թվականի No 1719-Ա/2 հրաման՝ <https://escs.am/am/news/18130>՝ հասանելի՝ 17.11.2025


² ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի No 1719-Ա/2 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» 19.09.2024 թվականի No 1793-Ա/2 հրաման՝ <https://escs.am/files/files/2024-09-24/41ba89f0c4d969feec9663b075731ac.pdf>՝ հասանելի՝ 17.11.2025

³ Փակման ենթակա դպրոցների աշակերտական, ուսուցչական և օժանդակ համակազմի, ինչպես նաև՝ տվյալ բնակավայրում դպրոցը միակ լինելու, այդ բնակավայրի սահմանամերձ, լեռնային ու բարձր լեռնային կարգավիճակներին վերաբերող ողջ տեղեկատվությունը վերցված է emis.am պաշտոնական հարթակի «[Կրթության կառավարման և տեղեկատվական համակարգի](#)», «[Տվյալների բազա](#)» բաժնի, «[Տվյալներ Ձեր ընտրությամբ \(դպրոցական\)](#)» ենթաբաժնի պաշտոնական տեղեկատվությունից:

Գծապատկեր 1





Գծապատկեր 2



Գծապատկեր 3

ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՀՀ ՈՉ ՔԱՂԱՔԱՑՅՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ



Աշխատանքից ազատման ենթակա ուսուցիչների և անձնակազմի ցուցանիշներով առաջինը Լոռին է՝ համապատասխանաբար՝ 545 և 500 ցուցանիշներով: Երկրորդը՝ Շիրակի մարզն է՝ 473 ուսուցիչ և 498 դպրոցական սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ: Այս համատեքստում երրորդը՝ Սյունիքն է, համապատասխանաբար՝ 375 և 475 ցուցանիշներով (գծապատկեր 2):

Փակման ենթակա 231 դպրոցները կազմում են հանրապետության ամբողջ դպրոցների 16,6 %-ը: Այսինքն, լուծարման է ենթակա հանրապետության յուրաքանչյուր 6-րդ դպրոցը:

Քանի որ, փակման ենթակա դպրոցների ցուցակում 97,5 տոկոսը վերաբերում են գյուղական բնակավայրերի դպրոցներին և ընդամենը վեցն են քաղաքային բնակավայրի դպրոց համարվում (ք. Քաջարանի թիվ 5 միջնակարգ, թիվ 6 հիմնական, ք. Ալավերդու թիվ 10 հիմնական, թիվ 11 միջնակարգ, ք. Գյումրու թիվ 43 հիմնական և ք. Սպիտակի թիվ 5 հիմնական դպրոցները), ապա առավել իրական պատկեր ստանալու համար անհրաժեշտ է լուծարման ենթակա դպրոցների ցուցանիշները վերլուծել գյուղական բնակավայրերի դպրոցների համատեքստում:

Այսպես օրինակ, հանրապետության 1395 դպրոցներից 589-ը տեղաբաշխված են 48 քաղաքային բնակավայրերում, որի առավել քան 42 տոկոսը՝ միայն Երևանում: Գյուղական բնակավայրերում այսօր գործող 806 դպրոցներից փակման ենթակա է 225-ը, ընդհանուրի՝ մոտ 28 տոկոսը: Սա ցույց է տալիս, որ այսօր լուծարման է ենթակա հանրապետության գյուղական բնակավայրերի դպրոցներից գրեթե յուրաքանչյուր երրորդը:

Պարզ է, որ լուծարման ենթակա գյուղական դպրոցների աշակերտական համակազմը համեմատաբար փոքր մասնաբաժին ունի գյուղական համայնքերի աշակերտների ընդհանուր համակազմում՝ 5 տոկոս: Սակայն, այս ցուցանիշը նույնպես բարձր կարելի է համարել, քանի որ, ըստ էության, գյուղական դպրոցի յուրաքանչյուր 20-րդ աշակերտը ստիպված է լինելու այլ բնակավայրի դպրոց հաճախել: Խնդիրն առավել սուր է արտահայտվում առանձին մարզերի կտրվածքով (գծապատկեր 4), հատկապես լեռնային տարածաշրջաններում, որտեղ լեռնային տարաբնակեցման առանձնահատկություններից ելնելով գյուղերն իրարից մեծ հեռավորության վրա են տեղաբաշխված:

Ինչ վերաբերում է ուսուցչական համակազմին, ապա գյուղական դպրոցների ուսուցիչներից յուրաքանչյուր 6-րդը (ընդհանուրի 16 տոկոսից ավելին), ենթակա է աշխատանքից ազատման: Ինչպես արդեն նշել ենք այս ցուցանիշը ամենաբարձրն է Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում (գծապատկեր 5):

Հանրապետության տարածքում փակման ենթակա բոլոր դպրոցներում ընդհանուր առմամբ աշխատում է նաև օժանդակ անձնակազմի 2471 աշխատակից, որից 2365-ը՝ գյուղական համայնքերի միակ դպրոցներում: Այս ցուցանիշով նույնպես առանձնանում են Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերը (գծապատկեր 6): Պետք է հատուկ շեշտադրել, որ գյուղական համայնքի դպրոցներում՝ հատկապես փոքր գյուղերում, օժանդակ համակազմը հիմնականում ձևավորվում է տվյալ համայնքի աշխատունակ բնակչությունից, որն ըստ էության կարելի է համարել տվյալ համայնքում

գյուղատնտեսական խիստ սահմանափակ աշխատանքներից զատ եկամուտ ունենալու եզակի աղբյուրներից մեկը, միաժամանակ տվյալ բնակչի, ընտանիքի համար հանդիսանալով գյուղում մնալու կարևոր շարժառիթ:

Ակնհայտ է, որ և՛ աշակերտական, և՛ ուսուցչական, և՛ օժանդակ համակազմի կորուստն առավել սուր է արտահայտվում սահմանամերձ, լեռնային և հատկապես՝ բարձր լեռնային բնակավայրերում:

Ըստ ՀՀ կառավարության 07.09.2023 թվականի N-1517-Ն «Հայաստանի Հանրապետության լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի ցանկը հաստատելու մասին» որոշման⁴ հանրապետությունում առկա է «բարձր լեռնային» կարգավիճակ ունեցող 189 բնակավայր, որը կազմում է տարաբնակեցման ընդհանուր համակարգի մոտ 20 տոկոսը: Փակման ենթակա 231 դպրոցներից 41-ը գտնվում են «բարձր լեռնային» կարգավիճակ ունեցող բնակավայրերում, որտեղ ընդհանուր առմամբ սովորում են 938 աշակերտ: Եթե հաշվի առնենք, որ այս ցանկում վերը նշված քաղաքներից բացի մյուսները հիմնականում փոքր գյուղերն են և ունեն միայն մեկ դպրոց, ապա ստացվում է, որ փակման է ենթակա համապատասխան կարգավիճակ ունեցող բնակավայրերից յուրքանյուր 5-րդի (ընդհանուրի՝ 22,5 տոկոսը) միակ դպրոցը: Մարզերի կտրվածքով, այս ցուցանիշը խիստ բարձր է Շիրակի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում: Ընդ որում, եթե փակման ենթակա դպրոցների ցուցանիշն ամենաբարձրն է Շիրակում՝ 13 «բարձր լեռնային» կարգավիճակ ունեցող բնակավայրի դպրոց (241 աշակերտ), ապա աշակերտական համակազմի ցուցանիշն ամենաբարձրն է Արագածոտնի մարզում՝ 345 աշակերտ՝ 11 փակման ենթակա դպրոցում (զծապատկեր 4):

Պատկերը շատ առավել մտահոգիչ է «լեռնային» կարգավիճակ ունեցող բնակավայրերի մասով, որտեղ փակման է ենթակա 108 դպրոց: Ըստ կառավարության նշված որոշման «լեռնային» կարգավիճակ ունեն հանրապետության 187 բնակավայր, որը նույնպես կազմում է ընդհանուր տարաբնակեցման համակարգի մոտ 20 տոկոսը: Այսինքն, «լեռնային» կարգավիճակ ունեցող բնակավայրերի 57,7 տոկոսում դպրոցները փակման են ենթակա, որտեղ սովորում են 3212 աշակերտ: Այս համատեքեստում, հատկապես անհանգստացնող է Լոռու, Շիրակի և Սյունիքի ցուցանիշները, համապատասխանաբար՝ 28 դպրոց - 914 աշակերտ, 26 դպրոց - 859 աշակերտ, 22 դպրոց - 378 աշակերտ: Հատկաշնական է, որ Կոտայքի մարզում փակման է ենթակա «լեռնային» կարգավիճակ ունեցող բնակավայրերի ընդամենը 5 դպրոց, բայց բավականին բարձր է աշակերտական համակազմի թիվը՝ 338: Դա այն դեպքում, երբ օրինակ Արագածոտնի մարզում համապատասխան կարգավիճակ ունեցող բնակավայրերի 4 դպրոց է փակվում, ընդհանուրը՝ 20 աշակերտով (զծապատկեր 5):

⁴ ՀՀ կառավարության 07.09.2023 թվականի N-1517-Ն «Հայաստանի Հանրապետության լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի ցանկը հաստատելու մասին» որոշում - <https://www.arlis.am/hy/acts/182221>, հասանելի 18.11.2025

Հաջորդ, բայց խիստ կարևոր խնդիրը վերաբերում է «սահմանամերձ» կարագավիճակ ունեցող բնակավայրերի դպրոցներին, որն ընդհանուր անվտանգային տեսակետից ամենախոցելին է:







Ըստ ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» N-713 որոշման, «սահմանամերձ» կարագավիճակ ունեն հանրապետության 186 բնակավայր: Փակման ենթակա դպրոցների ցուցակում ներառված են նմանատիպ կարագավիճակ ունեցող բնակավայրի 55 դպրոց, որը կազմում է հանրապետության ընդհանուր ցուցանիշի ավելի քան 30 տոկոսը: Եթե հաշվի առնենք, որ այս կարագավիճակի բնակավայրերից միայն Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Բարատաշենի տարրական, Քաջարանի թիվ 5 միջնակարգ ու թիվ 6 հիմնական դպրոցներն են, որ միակը չեն տվյալ բնակավայրում, ապա ստացվում է, որ ՀՀ «սահմանամերձ» կարագավիճակ ունեցող բնակավայրերից գրեթե յուրաքանչյուր երրորդում միակ դպրոցները լուծարվում են:

Փակման ենթակա «սահմանամերձ» կարագավիճակ ունեցող բնակավայրերի 55 դպրոցներում ընդհանուր թվով սովորում են 1772 աշակերտ:

Այս համատեքստում խիստ մտահոգիչ է Սյունիքի ցուցանիշները, որտեղ փակման է ենթակա սահմանամերձ բնակավայրերի 27 դպրոցներ, ամենաշատը մարզերի կտրվածքով՝ ընդհանուր 55-ի մոտ կեսը: Այստեղ սովորում են 644 աշակերտ: Ստացվում է, որ Սյունիքում փակման ենթակա 48 դպրոցների 56,2 տոկոսն (աշակերտների՝ 57,5 տոկոսը) ընդգրկում են մարզի «սահմանամերձ» կարագավիճակ ունեցող բնակավայրերը: Խնդիրն առավել սուր է արտահայտվում մարզի համայնքների (տարածաշրջանների) կտրվածքով: Մասնավորապես, Կապան համայնքում լուծարման ենթակա 14 դպրոցներից 12-ը գտնվում են «սահմանամերձ» կարագավիճակ ունեցող բնակավայրերում, որտեղ այդ դպրոցները միակն են: Գորիսում այդ ցուցանիշը՝ 8-ից 6-ն է:

«Սահմանամերձ» կարագավիճակ ունեցող բնակավայրերի մասով բավականին մտահոգիչ են նաև Շիրակի՝ 10 դպրոց – 441 աշակերտ, Տավուշի՝ 8 դպրոց – 352 աշակերտ և Գեղարքունիքի՝ 6 դպրոց – 148 աշակերտ ցուցանիշները:

Մարզերի ցուցանիշներն ներկայացված են գծապատկեր 6-ում, իսկ ներմարզային կտրվածքով առավել մանարամասն վերլուծությունը կներկայացվի առանձին-առանձին:



ԲԱԺԻՆ 2-Ը

ՀՀ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ


Հայաստանի Հանրապետության հանրակրթության ոլորտի աշխարհագրական ցանցը ներկայացված է 1395 ուսումնական հաստատություններով, որտեղ 2025-26 ուսումնական տարում սովորում է 422873 աշակերտ: Պարզ է, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների տարածական տեղաբաշխման մեծ ամենամեծ բաժինն ունի Երևանը, որտեղ կենտրոնացված է ՀՀ դպրոցների 18 տոկոսը՝ 252 հաստատություն: Շատ ավելի բարձր են Երևանի և՛ աշակերտական (34 տոկոս՝ 143358 աշակերտ), և՛ ուսուցչական (29 տոկոս՝ 9247 ուսուցիչ) համակազմերի ցուցանիշները:

Մարզերից գործող դպրոցների քանակով առաջատարները Շիրակի և Լոռու մարզերն են՝ 161-ական դպրոց, կամ ընդհանուրի 12-ական տոկոսը: Սակայն, աշակերտական համակազմի ցուցանիշներով առաջատարությունը բաժին է ընկնում՝ Կոտայքի (43794 աշակերտ), Արարատի (42826 աշակերտ) և Արմավիրի (40964 աշակերտ) մարզերին, որտեղ յուրաքանչյուրի մասնաբաժինն կազմում է ՀՀ աշակերտական ընդհանուր համակազմի մոտ 10-ական տոկոսը: Սյունիքը, որին բաժին է ընկնում ՀՀ դպրոցների 8 տոկոսը (117 դպրոց), ունի ՀՀ ընդհանուր աշակերտական համակազմի ընդամենը 4 տոկոս (17331 աշակերտ) մասնաբաժին: Իսկ Տավուշի գործող 82 դպրոցներում սովորում է 16981 աշակերտ, որը երկրորդ ամենափոքր մասնաբաժինն է ՀՀ աշակերտական ընդհանուր համակազմում՝ գերազանցելով միայն Վայոց Ձորի մասնաբաժինը՝ 68 դպրոց – 6940 աշակերտ (գծապատկեր 7, 8, 9):


Ակնահայտ է, որ դպրոցների լուծարման գործընթացի հիմնական թիրախները ձևավորվել են աշակերտ/ուսուցիչ, աշակերտ/օժանդակ կազմ հարաբերակցության պարզունակ տրամաբանությամբ, քանի որ, ըստ էության միայն ֆինանսական շարժառիթն է հանդիսանում սույն գործընթացի հիմնավորման գլխավոր փաստարկը: Այս խիստ պարզունակ մոտեցման արդյունքում թիրախավորվել են ՀՀ փոքր բնակավայրերը, որոնք զարգեցնում են ՀՀ տարաբնակեցման համակարգի լեռնային ու բարձր լեռնային շրջանները և ՀՀ սահամանակից հատվածների ոչ այնքան բարենպաստ գոտիները:

Ընդհանուր վերլուծությունն արդեն իսկ փաստում է, որ դպրոցների լուծարման գործընթացում անտեսվել են ՀՀ տարաբնակեցման համակարգի ամբողջական կենսունակության հիմնահարցերը, որոնց հետևանքով առաջացող ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական, քաղաքական և նույնիսկ՝ ֆիզիկական անվտանգային սպառնալիքները կամա թե ակամա (միամիտ, թե դիտավորյալ) կերպով ուշադրության չեն արածանացել: Իսկ նմանատիպ խնդիրները շատ առավել սուր են դրսևորվում առանձին մարզերի, նույնիսկ առանձին տարածաշրջանների ու համայնքների կտրվածքով, ինչն իր հերթին պարտադրում է Հայաստանի Հանրապետությունում դպրոցների փակման գործընթացը մանրամասն դիտարկել ըստ մարզերի:


Գծապատկեր 7



Գծապատկեր 8



Գծապատկեր 9



Ա. ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Ինչպես արդեն նշել ենք ՀՀ-ում դպրոցների փակման գործընթացի գլխավոր թիրախներից մեկը, եթե ոչ առաջնայինը՝ Սյունիքի մարզն է, որը փակման ենթակա 48 դպրոցների քանակով առաջատարն է Շիրակի մարզի հետ: Այսինքն ստացվում է, որ նախատեսված է լուծարել Սյունիքի մարզի ընդհանուր դպրոցների (117 դպրոց) 41 տոկոսը՝ ամեն 5 դպրոցից առնվազն 2-ը (մարզի փակվող դպրոցների ամբողջական ցանկը ներկայացված է աղյուսակ 1-ում):

Մարզի փակման ենթակա դպրոցներից միայն 2-ն են, որ հանդիսանում են քաղաքային բնակավայրի դպրոցներ՝ Քաջարանի թիվ 5 հիմնական և թիվ 6 միջնակարգ դպրոցները: Լուծարվող մյուս 46-ը հանդիսանում են գյուղական բնակավայրերի միակ դպրոցներ, որոնք մարզի գյուղական բնակավայրերի դպրոցների (85 դպրոց) մոտ 55 տոկոսն են կազմում: Ստացվում է, որ Սյունիքի մարզի գյուղական բնակավայրերի դպրոցների ավելի քան յուրաքանչյուր երկրորդը լուծարվում է:

Նախորդիվ արդեն նշել ենք, որ պատկերն առավել մտահոգիչ է սահմանամերձ կարգավիճակ ունեցող բնակավայրերի կտրվածքով, երբ մարզի փակման ենթակա դպրոցների մոտ կեսը՝ 27 դպրոց, գտնվում են սահմանամերձ բնակավայրերում: Ակնհայտ է, որ այս խնդիրն իր մեջ պարունակում ՀՀ սահմանային անվտանգության լրջագույն սպառնալիքներ, որն ինչպես արդեն նշել ենք առավել խստությամբ արտահայտվում է Կապանի տարածաշրջանում, որտեղ փակվող 14 դպրոցներից 12-ը հանդիսանում են սահմանամերձ բնակավայրի միակ դպրոցը:

Մարզի համայնքներից փակման ենթակա դպրոցների քանակով, առանձնանում է Միսիանի տարածաշրջանը, որտեղ նախատեսվում է փակել 19 դպրոց՝ մարզի լուծարման ենթակա դպրոցների մոտ 40 տոկոսը: Հատկանշական է, որ Միսիանի տարածաշրջանում լուծարվող բոլոր դպրոցները տվյալ բնակավայրում միակն են, որտեղ միասին սովորում են 380 աշակերտ: Այս ցուցանիշը կազմում է Միսիան համայնքի ընդհանուր աշակերտական համակազմի մոտ 11 տոկոսը (ընդհանուր՝ 3525 աշակերտ): Այսինքն, Միսիանի տարածաշրջանի յուրաքանչյուր տասներորդ աշակերտը ստիպված է հաճախելու այլ բնակավայրի դպրոց: Իսկ եթե Միսիան համայնքի միայն գյուղական բնակավայրերի ցուցանիշներն ենք դիտարկում, ապա ընդհանուր 1431 աշակերտից յուրաքանչյուր չորրորդը՝ 26,6 տոկոսը, պետք է հաճախի այլ բնակավայրի դպրոց:

Լուծարվող դպրոցներում աշխատում են 148 ուսուցիչ: Այս ցուցանիշը համայնքի գյուղական բնակավայրերի ուսուցչական համակազմի (349 ուսուցիչ) ավելի քան 42 տոկոսն է կազմում: Ավելի բարձր է լուծարման ենթակա դպրոցների օժանդակ համակազմի բաժինը գյուղական բնակավայրերի համապատասխան ընդհանուր ցուցանիշում՝ 48,2 տոկոս. 491-ից՝ 237-ը:

Մարզի մյուս համայնքներից Գորիսում փակման է ենթակա 8 դպրոց, ընդհանուր 167 աշակերտական, 71 ուսուցչական և 112 օժանդակ համակազմի ցուցանիշներով:

Մեղրիում լուծարման ենթակա դպրոցների թիվը 5-ն են, որտեղ ընդհանուր առմամբ սովորում են 101 աշակերտ, աշխատում են 41 ուսուցիչ և 51 սպասարկող համակազմի ներկայացուցիչ:

Մարզի Քաջարան համայնքի համապատասխան ցուցանիշներն են՝ 4 դպրոց (2-ը՝ Քաջարան քաղաքում), 51 ուսուցիչ և 54 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ:

Սյունիքի մարզում ամբողջական պատկերը ստանալու համար հավելենք, որ փակման ենթակա դպրոցների բնակավայրերի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 11877 մարդ, որը մարզի բնակչության մոտ 9-ը տոկոսն է կազմում: Իսկ եթե այդ ցուցանիշը համադրում ենք մարզի գյուղական բնակչության հետ՝ 39557 մարդ, ապա այդ ցուցանիշը անցնում է 30 տոկոսից: Ստացվում է, որ դպրոցների փակման գործընթացով, Սյունիքի մարզի գյուղական բնակչությունից ամեն երրորդ բնակչին կարող ենք դիտարկել գյուղից հեռացող:

Մարզում փակման ենթակա դպրոցների բնակավայրերի վարչական տարածքների զբաղեցարժ ընդհանուր մակերեսը կազմում 1047,48 կմ²: Այս ցուցանիշը մարզի ընդհանուր տարածքի (4506 կմ²) ավելի քան 23 տոկոսն է: Այսինքն, մարզի տարածքի մոտ ¼-ը գտնվում է ամայացման վտանգի առաջ: Ակնհայտ է, որ այս ցուցանիշը կտրուկ բարձրանում է միայն գյուղատնտեսական նշանակության հողահանդակների դիտարկման պարագայում, քանի որ ամայացող բնակավայրերը ոչ միայն մարզի տարաբնակեցման համակարգի կարևոր շերտն են կազմում, այլև որպես լեռնային ու բարձր լեռնային տարածքներ զբաղեցնում են մարզի խոտհարքների ու արոտավայրերի զգալի մասնաբաժինը:

Որպես ամփոփում, եզրակացնենք, որ Սյունիքը Հայաստանի ամենաերկար սահմանն ունի հարևան պետության հետ: Դպրոցների փակման հետևանքով տարածքների ապաբնակեցումը կարող է հանգեցնել սահմանային գոտու արագ ամայացման, ինչը կղձվարացնի սահմանի հսկողությունը և կստեղծի անվտանգության խոցելի գոտիներ: Այս գործընթացը երկարաժամկետ կտրվածքով կարող է պայմաններ ստեղծել տարածքային հավակնությունների համար:

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Աղյուսակ 1

N	ՀԱՄԱՑՆՔ/ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԴՊՐՈՑ	ԱՇԱԿԵՐՏ	ՈՒՍՈՒՑԻՉ	ՕԺ. ԿԱԶՄ
ԿԱՊԱՆ					
Ընդամենը			214	90	158
1	Կապան / Ագարակ	գ. Ագարակի հմ/դ	6	4	11
2	Կապան / Աղվանի	գ. Աղվանու հմ/դ	1	- չունի -	8
3	Կապան / Դավիթ Բեկ	գ. Դավիթբեկի մ/դ	47	13	15
4	Կապան / Եղեգ	գ. Եղեգի մ/դ	39	13	12
5	Կապան / Ճակատեն	գ. Ճակատենի հմ/դ	9	5	12
6	Կապան / Ներքին Հանդի	գ. Ներքին Հանդի հմ/դ	3	3	12
7	Կապան / Շիկահող	գ. Շիկահողի մ/դ	8	8	21
8	Կապան / Վարդավանք	գ. Վարդավանքի մ/դ	22	10	12

9	Կապան / Վերին Խոտանան	գ. Վերին Խոտանանի մ/դ	28	16	8
10	Կապան / Տանձավեր	գ. Տանձավերի մ/դ	5	1	18
11	Կապան / Տավրուս	գ. Տավրուսի մ/դ	9	5	10
12	Կապան / Օխտար	գ. Օխտարի մ/դ	37	12	19
ՄԻՄԱՆ ՀԱՄԱՅՆՔ					
			380	148	237
1	Սիսիան / Արևիս	գ. Արևիսի հմ/դ	4	3	9
2	Սիսիան / Բալաթ	գ. Բալաթի տ/դ	5	3	7
3	Սիսիան / Բեունիս	գ. Բեունիսի հմ/դ	16	7	11
4	Սիսիան / Թասիկ	գ. Թասիկի հմ/դ	20	8	9
5	Սիսիան / Լձեն	գ. Լձենի հմ/դ	7	6	12
6	Սիսիան / Լոր	գ. Լորի մ/դ	23	9	19
7	Սիսիան / Ծղուկ	գ. Ծղուկի մ/դ	18	9	14
8	Սիսիան / Հացավան	գ. Հացավանի մ/դ	24	11	13
9	Սիսիան / Մուցք	գ. Մուցքի հմ/դ	6	5	11
10	Սիսիան / Սոֆլու	գ. Նժդեհ (Սոֆլուի) հմ/դ	7	5	8
11	Սիսիան / Շամբ	գ. Շամբի մ/դ	41	17	16
12	Սիսիան / Շենաթաղ	գ. Շենաթաղի հմ/դ	30	8	13
13	Սիսիան / Որոտան	գ. Որոտանի հմ/դ	18	9	11
14	Սիսիան / Սալվարդ	գ. Սալվարդի հմ/դ	12	6	13
15	Սիսիան / Սպանդարյան	գ. Սպանդարյանի մ/դ	35	11	19
16	Սիսիան / Տոլորս	գ. Տոլորսի մ/դ	64	13	14
17	Սիսիան / Տորունիք	գ. Տորունիքի հմ/դ	9	4	11
18	Սիսիան / Դաստակերտ	ք. Դաստակերտի մ/դ	6	4	16
19	Սիսիան / Աղիտու	գ. Աղիտուի հմ/դ	35	9	11
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			167	71	112
1	Գորիս / Բարձրավան	գ. Բարձրավանի մ/դ	17	13	13
2	Գորիս / Ներքին Խնձորեսկ	գ. Ներքին Խնձորեսկի մ/դ	24	10	14
3	Գորիս / Շուռնուխ	գ. Շուռնուխի մ/դ	14	8	12
4	Գորիս / Սվարանց	գ. Սվարանցի մ/դ	20	9	16
5	Գորիս / Տանձատափ	գ. Տանձատափի հմ/դ	5	3	10
6	Գորիս / Վաղատուր	գ. Վաղատուրի մ/դ	41	13	16
7	Գորիս / Խոզնավարի	գ. Խոզնավարի մ/դ	36	11	18
8	Գորիս / Արավուս	գ. Արավուսի տ/դ	10	4	13
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			167	71	112
1	Քաջարան / Քաջարան	ք. Քաջարանի թիվ 5 մ/դ	66	20	15
2	Քաջարան / Քաջարան	ք. Քաջարանի թիվ 6 հմ/դ	16	11	12
3	Քաջարան / Գեղի	գ. Գեղիի մ/դ	31	12	15
4	Քաջարան / Լեռնաձոր	գ. Լեռնաձորի մ/դ	78	11	15
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			101	41	51
1	Մեղրի / Վարդանիձոր	գ. Վարդանիձորի մ/դ	26	12	13
2	Մեղրի / Նոնաձոր	գ. Նոնաձորի մ/դ	11	6	11
3	Մեղրի / Կարճևան	գ. Կարճևանի հմ/դ	25	9	11
4	Մեղրի / Լիճք	գ. Լիճքի մ/դ	- չունի -	- չունի -	2
5	Մեղրի / Ալվանք	գ. Ալվանքի մ/դ	39	14	16

Բ. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

Օպտիմալացման՝ փակման ենթակա դպրոցների ցուցակում Շիրակի մարզից նշված են 48 դպրոց, որտեղ ընդհանուր առմամբ սովորում են 1622 աշակերտ, աշխատում են 473 ուսուցիչ և 498 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ (Շիրակի մարզի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2-ում): Մարզում լուծարվող դպրոցներից միայն 1-ը՝ Գյումրու թիվ 43 դպրոցն է, որը գտնվում է քաղաքային բնակավայրում և միակը չէ տվյալ բնակավայրի համար: Մնացած 47-ը՝ գտնվում են բացառապես գյուղական բնակավայրերում և հանդիսանում են տվյալ բնակավայրի միակ դպրոցը: Սա ցույց է տալիս, որ նախատեսվում է լուծարել մարզի ոչ քաղաքային բնակավայրերի դպրոցների մոտ 42 տոկոսը, 113-ից՝ 47-ը⁵: Այսինքն, Շիրակում, ինչպես նաև Սյունիքում, փակման է ենթակա գյուղական յուրաքանչյուր հինգ դպրոցից՝ ավելի քան երկուսը: Գյուղական համայնքներում լուծարվող դպրոցների աշակերտների ընդհանուր թիվը կազմում է 1599 (ևս 23-ը՝ Գյումրու թիվ 43 դպրոցում), որը մարզի գյուղական բնակավայրերի աշակերտական ընդհանուր թվի (12574) մոտ 13 տոկոսն է: Կրճատման ենթակա ուսուցիչների ու օժանդակ համակազմի մասնաբաժինը համապատասխանաբար կազմում է 28-ական և 27-ական տոկոսը:

Մարզի տարածաշրջաններից թերևս ամենախոցելին հյուսիսային՝ Ամասիա և Աշոցք համայնքներն են:

Մասնավորապես, Ամասիայում նախատեսվում է լուծարել 15 դպրոց՝ 304 աշակերտով, 110 ուսուցչով և 143 սպասարկող կազմի ներկայացուցիչներով, ինչը ենթադրում է, որ փակման են ենթակա համայնքի դպրոցների 79 տոկոսը, 19-ից՝ 15-ը, որտեղ սովորում են աշակերտների 40 տոկոսը և աշխատում են ուսուցիչների մոտ 60 տոկոսը: Սա դպրոցների փակման գործընթացում, համայնքների կտրվածքով ամենաբարձր ցուցանիշներից է: Ընդ որում, այսօր համայնքի կազմի մեջ մտնող 26 բնակավայրերից, ըստ emis.am հարթակի տվյալների բազայի՝ միայն 19-ում կա գործող դպրոց: Եվ այս գործընթացի հետևանքով նախատեսվում է բոլոր 26 բնակավայրերի համար ունենալ ընդամենը 4 դպրոց: Եթե հաշվի առնենք, որ Ամասիան՝ որպես տիպիկ լեռնային տարածաշրջան ունի համեմատաբար մեծ հեռավորության վրա ցրված տարաբնակեցման ցանց, ապա անհասկանալի է դառնում, թե ինչպես է կազմակերպվելու մեծ հեռավորության վրա գտնվող բնակավայրերից աշակերտների տեղափոխումը՝ ընտրված դպրոցներ: Նշենք նաև, որ փակման ենթակա դպրոցների բնակավայրերից 4-ը համարվում են սահմանամերձ (Գտաշեն, Զարիշատ, Զորակերտ, Մեղրաշատ), իսկ 8 ական բնակավայր՝ լեռնային ու բարձր լեռնային:

⁵ Շիրակի մարզի քաղաքներում գործում են 48 դպրոց, որից 39-ը Գյումրիում, 7-ը՝ Արթիկում, 2-ը Մարալիկում, որտեղ սովորում են 19383 աշակերտ, աշխատում են 1372 ուսուցիչ և 1250 օժանդակ անձնակազմի ներկայացուցիչ:

Ամասիայում լուծարման ենթակա դպրոցների բնակավայրերում բնակչության ընդհանուր թիվը կազմում է 3750 մարդ, որը ամբողջ համայնքի բնակչության ավելի քան 46 տոկոսն է:⁶

Մարզում դպրոցների փակման գործընթացի հաջորդ թիրախներն են Աշոցք և Ախուրյան համայնքները, որտեղ նախատեսվում է լուծարել 11-ական դպրոց՝ մարզի համապատասխան ցուցանիշի մոտ 23-ական տոկոսը:

Աշոցքում այսօր առկա 25 բնակավայրերում, ըստ նույն emis.am հարթակի տվյալների բազայի գործում են ընդամենը 19 դպրոց, որտեղ սովորում են ընդհանուր առմամբ 1145 աշակերտ և աշխատում են 246 ուսուցիչ: Ստացվում է, որ դպրոցների փակման այս գործընթացի թիրախում հայտնվելու են համայնքի աշակերտական համակազմի 26 տոկոսը (297 աշակերտ) և ուսուցիչների 45 տոկոսը (111 ուսուցիչ):

Փակման ենթակա դպրոցների բնակավայրերում ապրում է 3293 մարդ, որը կազմում է Աշոցք համայնքի բնակչության 30,7 տոկոսը: Այդ նույն բնակավայրերի վարչական տարածքների զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում է 174 կմ², որը համայնքի վարչական տարածքի ավելի քան 30 տոկոսն է կազմում:

Ախուրյանում փակման ենթակա 11 դպրոցներում ընդհանուր առմամբ սովորում են 425 աշակերտ, աշխատում են 108 ուսուցիչ և 100 վարչական ու սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ: Փակվող դպրոցների քանակը համայնքի ընդհանուր դպրոցների 30 տոկոսն է կազմում: Լուծարման ենթակա դպրոցների բնակավայրերից Բայանդուրն ունի սահմանամերձ բնակավայրի կարգավիճակ, որտեղ սովորում են 112 աշակերտ: Սա ամենաբարձր աշակերտական կազմ ունեցող դպրոցն է փակվող դպրոցների ցանկում: Եվս 8-ը՝ ունեն լեռնային բնակավայրի կարգավիճակ:

Մարզի մյուս համայնքներից Անիում նախատեսվում է փակել 7 դպրոց՝ 429 աշակերտ, 89 ուսուցիչ և 90 վարչական ու ուսուցչական անձնակազմի ներկայացուցիչ: Այդ 7 դպրոցների բնակավայրերից 4-ը՝ Ադին, Անիպեմզա, Լուսաղբյուր և Հայկաձոր, ունեն սահմանամերձ բնակավայրի կարգավիճակ:

Իսկ Արթիկ համայնքում նախատեսվում է լուծարել 4 դպրոց, որտեղ սովորում են 163 աշակերտ, աշխատում է 40 ուսուցիչ և 36 վարչական ու օժանդակ անձնակազմի ներկայացուցիչ:

Շիրակում փակման ենթակա դպրոցների բնակավայրերի վարչական տարածքների զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում 808,4 կմ²: Այս ցուցանիշը մարզի ընդհանուր տարածքի (2681 կմ²) ավելի քան 25 տոկոսից ավելին է: Այսինքն, մարզի տարածքի գրեթե ¼-ը գտնվում է ամայացման վտանգի առաջ: Եվ ինչպես Սյունիքի մարզի պարագայում ենք արդեն շեշտադրել, ակնհայտ է, որ այս ցուցանիշը կտրուկ կբարձրանա միայն գյուղատնտեսական նշանակության հողահանդակների դիտարկման ժամանակ:

⁶ Ամասիա համայնքի բնակչության ցուցանիշները վերցված են համայնքապետարանի պաշտոնական կայքից - <https://amasia.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbeb4291>, հասանելի է 21.11.2025 թ

Հավելենք, որ լուծարման ենթակա դպրոցների բնակավայրերի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 18098 մարդ, որը մարզի գյուղական բնակչության 11,5 տոկոսն է կազմում:

Վերջում շեշտադրենք, որ Շիրակը նույնպես սահմանամերձ մարզ է, և 10 դպրոցի փակումը կարող է ազդել սահմանամերձ գոտիների բնակչության «կաչունության» վրա: Իսկ բարձր լեռնային գոտիներից բնակչության արտահոսքը կնվազեցնի այդ տարածքների տնտեսական ակտիվությունը:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Աղյուսակ 2

N	ՀԱՄԱՅՆՔ/ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԴՊՐՈՑ	ԱՇԱԿԵՐՏ	ՈՒՍՈՒՑԻՉ	ՕԺ. ԿԱԶՄ
ԱՆՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			415	108	100
1	Ախուրյան / Գետք	գ. Գետքի մ/դ	72	14	12
2	Ախուրյան / Լեռնուտ	գ. Լեռնուտի մ/դ	15	11	8
3	Ախուրյան / Կրաշեն	գ. Կրաշենի հմ/դ	24	10	12
4	Ախուրյան / Հովիտ	գ. Հովիտի մ/դ	53	11	11
5	Ախուրյան / Հովունի	գ. Հովունու մ/դ	47	13	10
6	Ախուրյան / Մեծ Սարիար	գ. Մեծ Սարիարի մ/դ	47	12	13
7	Ախուրյան / Նոր Ախուրյան	գ. Նոր Ախուրյանի հմ/դ	20	10	9
8	Ախուրյան / Ջաջուռ կայարան	գ. Ջաջուռ կայարանի տ/դ	4	2	4
9	Ախուրյան / Փոքրաշեն	գ. Փոքրաշենի մ/դ	21	10	10
10	Ախուրյան / Բայանդուր	գ. Բայանդուրի մ/դ	112	15	11
ԱՄՍԱԽԱ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			304	110	143
1	Ամասիա / Ալվար	գ. Ալվարի մ/դ	11	6	13
2	Ամասիա / Աղվորիկ	գ. Աղվորիկի հմ/դ	9	4	10
3	Ամասիա / Արդենիս	գ. Արդենիսի հմ/դ	6	4	6
4	Ամասիա / Բանդիվան	գ. Բանդիվանի մ/դ	56	13	13
5	Ամասիա / Գառնառիճ	գ. Գառնառիճի մ/դ	33	11	10
6	Ամասիա / Գտաշեն	գ. Գտաշենի մ/դ	11	5	12
7	Ամասիա / Զարիշատ	գ. Զարիշատի հմ/դ	5	3	4
8	Ամասիա / Զորակերտ	գ. Զորակերտի մ/դ	8	6	7
9	Ամասիա / Ծաղկուտ	գ. Ծաղկուտի մ/դ	30	10	9
10	Ամասիա / Հովտուն	գ. Հովտունի տ/դ	7	3	8
11	Ամասիա / Շաղիկ	գ. Շաղիկի հմ/դ	1	2	4
12	Ամասիա / Ողջի	գ. Ողջիի Առուստամյանի անվ. մ/դ	25	8	10

13	Ամասիա / Հողմիկ	գ. Հողմիկի մ/դ	25	13	10
14	Ամասիա / Մեղրաշատ	գ. Մեղրաշատի մ/դ	52	12	13
15	Ամասիա / Ջրածոր	գ. Ջրածորի մ/դ	25	10	14
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			420	89	90
1	Անի / Աղին	գ. Աղինի մ/դ	53	12	12
2	Անի / Անիպեմզա	գ. Անիպեմզայի մ/դ	50	14	14
3	Անի / Գուսանազյուղ	գ. Գուսանազյուղի մ/դ	90	14	15
4	Անի / Լուսաղբյուր	գ. Լուսաղբյուրի մ/դ	91	16	11
5	Անի / Հայկածոր	գ. Հայկածորի մ/դ	59	14	15
6	Անի / Սարակապ	գ. Սարակապի մ/դ	60	10	13
7	Անի / Անիավան	գ. Անի կայարանի մ/դ	17	9	10
ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			297	111	119
1	Աշոցք / Արփենի	գ. Արփենիի մ/դ	42	10	8
2	Աշոցք / Գոգհովիտ	գ. Գոգհովիտի մ/դ	34	12	13
3	Աշոցք / Զույգաղբյուր	գ. Զույգաղբյուրի մ/դ	57	13	9
4	Աշոցք / Թավշուտ	գ. Թավշուտի մ/դ	40	13	16
5	Աշոցք / Կարմրավան	գ. Կարմրավանի հմ/դ	19	10	10
6	Աշոցք / Կաքավասար	գ. Կաքավասարի տ/դ	2	- չունի -	6
7	Աշոցք / Հարթաշեն	գ. Հարթաշենի հմ/դ	13	10	5
8	Աշոցք / Ձորաշեն	գ. Ձորաշենի մ/դ	24	11	14
9	Աշոցք / Սարագյուղ	գ. Սարագյուղի հմ/դ	9	7	10
10	Աշոցք / Սիգավետ	գ. Սիգավետի մ/դ	23	11	12
11	Աշոցք / Փոքր Սարիար	գ. Փոքր Սարիարի մ/դ	34	14	16
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			163	40	36
1	Արթիկ / Լուսակերտ	գ. Լուսակերտի մ/դ	51	14	11
2	Արթիկ / Հայկասար	գ. Հայկասարի հմ/դ	23	8	7
3	Արթիկ / Հովտաշեն	գ. Հովտաշենի հմ/դ	46	9	7
4	Արթիկ / Տուֆաշեն	գ. Տուֆաշենի մ/դ	43	9	11
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ					
1	Գյումրի / Գյումրի	ք. Գյումրու թիվ 43 հմ/դ	23	15	10

Գ. ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

Լոռու մարզից փակման ենթակա դպրոցների ցուցակում ներառված են 47 դպրոց, որտեղ ընդհանուր առմամբ սովորում են 1607 աշակերտ, աշխատում են 543 ուսուցիչ և 500 վարչական ու օժանդակ կազմի ներկայացուցիչ (աղյուսակ 3): Այս ցուցանիշները փաստում են, որ փակման է ենթակա մարզի դպրոցների շուրջ 30 տոկոսը՝ 161-ից՝ 47-ը: Եթե հաշվի առնենք, որ փակման ենթակա 47 դպրոցներից միայն 3-ն են, որ հանդիսանում են քաղաքային բնակավայրի դպրոց (Ալավերդու թիվ 10 հմ/դ, թիվ 11 հմ/դ և Սպիտակի թիվ 5 հմ/դ), ապա ստացվում է, որ Լոռիում լուծարման է ենթակա գյուղական բնակավայրերի 102 դպրոցների 43%-ը, որտեղ սովորում 1390 աշակերտ՝ գյուղական բնակավայրերի դպրոցների աշակերտների թվի (11381 աշակերտ) ավելի քան 12 տոկոսը: Այսինքն, Լոռու մարզում գյուղական բնակավայրերի դպրոցների գրեթե կեսը փակվում են, իսկ գյուղական բնակավայրերից յուրաքանչյուր 8-րդ աշակերտը ստիպված է հաճախել այլ բնակավայրի դպրոց:

Լուծարման ենթակա դպրոցներից միայն 5-ն են, որոնք միակը չեն համարվում տվյալ բնակավայրի համար: Վերը նշված քաղաքային երեք դպրոցներից բացի, այդպիսիք են համարվում Շիրակամուտի թիվ 2 հմ/դ և Բագումի Մարշալ Բաղրամյանի անվան հմ/դ-ը: Ցուցակում ներառված մյուս դպրոցները եզակի են տվյալ բնակավայրի համար, որտեղ սովորում են ընդհանուր թվով 1335 աշակերտ:

Փակման ենթակա դպրոցների բնակավայրերի ընդհանուր բնակչության թիվը կազմում է 17976 մարդ, որը մարզի ընդհանուր բնակչության մոտ 8 տոկոսն է կազմում, սակայն էթե այս ցուցանիշը համադրում ենք Լոռու գյուղական բնակչության հետ (82393 մարդ), ապա այս ցուցանիշը կազմում է ավելի քան 21 տոկոսը: Այսինքն, դպրոցների փակման գործընթացի հետևանքները կրելու են մարզի գյուղական բնակչությունից յուրաքանչյուր 5-րդը, ով, ըստ մասնագիտական դիտարկումների, պոտենցիալ արտագաղթող է համարվում իր բնակավայրից:

Լոռու մարզի տարածաշրջաններից փակման ենթակա դպրոցների մասնաբաժնով առանձնանում է Ալավերդի համայնքը, որտեղ նախատեսվում է փակել գործող 42 դպրոցներից 16-ը՝ ավելի քան 38 տոկոսը: Սակայն, էթե հաշվի առնենք, որ փակվող դպրոցներից 12-ը գյուղական բնակավայրերի միակ դպրոցներն են, ապա ստացվում է, որ այս ծրագրով փակման է ենթակա Ալավերդու ոչ քաղաքային բնակավայրերի դպրոցների ավելի քան 48 %-ը: Այսինքն, Ալավերդի համայնքում գյուղական բնակավայրերի յուրաքանչյուր երկրորդ դպրոցը նախատեսվում է լուծարել, որոնք հանդիսանում են տվյալ բնակավայրերի միակ դպրոցները:

Մարզի տարածաշրջաններից փակման ենթակա դպրոցների մասնաբաժնով հաջորդը՝ Ստեփանավան համայնքն է: Այստեղ ընդհանուր 22 դպրոցից նախատեսում են լուծարել 9-ը: Սակայն, պետք է նշել, որ համայնքում ներառված 19 գյուղական բնակավայրերից այսօր դպրոցներ առկա են միայն 17-ում, իսկ փակման ենթակա բոլոր դպրոցները հանդիսանում են գյուղական բնակավայրերի միակ դպրոցները: Հետևաբար, ստացվում է, որ նախատեսվում է փակել գյուղական գործող դպրոցների կեսից ավելին՝ մոտ 53 տոկոս,

որտեղ սովորում են աշակերտական համակազմի մոտ 20 %-ը (1713-ից՝ 328-ը), աշխատում են ուսուցիչների 38 %-ը (238-ից՝ 91-ը): Այսպիսով, Ստեփանավան համայնքում համանուն քաղաքի դպրոցներից բացի, նախատեսվում է մնացած 19 բնակավայրի համար դպրոցներ գործարկել ընդամենը 8-ում:

Լոռու մարզում, բացի նշված համայնքների դպրոցներից նախատեսվում է լուծարել ևս 9 դպրոց Գուգարք համայնքում (350 աշակերտ, 109 ուսուցիչ, 92 վարչական ու օժանդակ համակազմի ներկայացուցիչ), 8 դպրոց Սպիտակում (315 աշակերտ, 91 ուսուցիչ, 77 վարչական ու օժանդակ համակազմի ներկայացուցիչ) և 5 դպրոց Տաշիրում (120 աշակերտ, 41 ուսուցիչ, 25 վարչական ու օժանդակ համակազմի ներկայացուցիչ):

Վերջում հավելենք, որ Լոռու մարզում փակվող դպրոցներից 28-ը գտնվում են լեռնային կարագավիճակ ունեցող բնակավայրերում և հանդիսանում են միակը: Ստացվում է, որ Լոռու մարզի լեռնային կարագավիճակ ունեցող բնակավայրերի 87,5 %-ում՝ 32-ից 28-ում, փակվում են միակ դպրոցները: Այսինքն, պոտենցիալ ամայացման վտանգի տակ է հայտնվում ոչ միայն մարզի տարաբնակեցման կարևոր գոտին, այլև գյուղատնտեսական մասնագիտացման ու մշակութային ինքնատիպության (ավանդույթ, բարբառ և այլն) կարևոր շերտը:

Լոռին նաև ունի ամենաբարձր ցուցանիշը կրճատման ենթակա ուսուցիչների (545) և վարչական ու օժանդակ համակազմի (500) կտրվածքով:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Աղյուսակ 3

N	ՀԱՄԱՑՆՔ/ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԴՊՐՈՑ	ԱՇԱԿԵՐՏ	ՈՒՍՈՒՑԻՉ	ՕԺ. ԿԱԶՄ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՑՆՔ					
Ընդամենը			494	163	159
1	Ալավերդի / Աթան	գ. Աթանի հմ/դ	18	5	10
2	Ալավերդի / Ահնիձոր	գ. Ահնիձորի հմ/դ	12	9	7
3	Ալավերդի / Այգեհատ	գ. Այգեհատի հմ/դ	12	- չունի -	19
4	Ալավերդի / Արդվի	գ. Արդվու հմ/դ	9	11	10
5	Ալավերդի / Ծաթեր	գ. Ծաթերի հմ/դ	33	15	9
6	Ալավերդի / Ծաղկաշատ	գ. Ծաղկաշատի հմ/դ	9	10	11
7	Ալավերդի / Կաճաճկուտ	գ. Կաճաճկուտի հմ/դ	27	9	11
8	Ալավերդի / Կարմիր Աղեզի	գ. Կարմիր Աղեզու հմ/դ	17	9	8
9	Ալավերդի / Մարցի	գ. Մարցի մ/դ	51	15	11
10	Ալավերդի / Մղարթ	գ. Մղարթի հմ/դ	33	10	8
11	Ալավերդի / Նեղոց	գ. Նեղոցի հմ/դ	60	12	10
12	Ալավերդի / Շամուտ	գ. Շամուտի հմ/դ	23	9	9
13	Ալավերդի / Չկալով	գ. Չկալովի հմ/դ	8	10	9
14	Ալավերդի / Քարկոփ	գ. Քարկոփի մ/դ	45	13	8
15	Ալավերդի / Ալավերդի	ք. Ալավերդու N11 մ/դ	54	12	10
16	Ալավերդի / Ալավերդի	ք. Ալավերդու թիվ 10 հմ/դ	83	14	9

ՄՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			209	66	57
1	Սպիտակ / Գեղասար	գ. Գեղասարի մ/դ	61	12	9
2	Սպիտակ / Խնկոյան	գ. Խնկոյանի հմ/դ	10	7	12
3	Սպիտակ / Նոր Խաչակապ	գ. Նոր Խաչակապի մ/դ	56	14	8
4	Սպիտակ / Շենավան	գ. Շենավանի հմ/դ	34	11	11
5	Սպիտակ / Սարալանջ	գ. Սարալանջի հմ/դ	6	10	9
6	Սպիտակ / Քարաձոր	գ. Քարաձոր հմ/դ	42	12	8
7	Սպիտակ / Սպիտակ	ք. Սպիտակի թիվ 5 հմ/դ	81	14	19
8	Սպիտակ / Շիրակամուտ	գ. Շիրակամուտի հմ/դ	25	11	1
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			328	91	88
1	Ստեփանավան / Արմանիս	գ. Արմանիսի հմ/դ	28	12	10
2	Ստեփանավան / Բովաձոր	գ. Բովաձորի մ/դ	13	10	8
3	Ստեփանավան / Լոռի Բերդ	գ. Լոռի Բերդի հմ/դ	36	12	12
4	Ստեփանավան / Կողես	գ. Կողեսի հմ/դ	36	12	10
5	Ստեփանավան / Հոբարձի	գ. Հոբարձու Ա. Ղուկասյանի անվ. մ/դ	64	12	11
6	Ստեփանավան / Յաղդան	գ. Յաղդանի հմ/դ	53	12	12
7	Ստեփանավան / Ուրասար	գ. Ուրասարի հմ/դ	45	10	11
8	Ստեփանավան / Պուշկինո	գ. Պուշկինոյի հմ/դ	53	11	14
9	Գյուլագարակ / Ամրակից	գ. Ամրակիցի մ/դ	47	14	12
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			120	41	45
1	Տաշիր / Պետրովկայի	Պետրովկայի հմ/դ	21	8	8
2	Տաշիր / Բլագոդարնոյե	գ. Բլագոդարնոյեի հմ/դ	40	7	10
3	Տաշիր / Դաշտադեմ	գ. Դաշտադեմի մ/դ	8	11	7
4	Տաշիր / Չյունաշող	գ. Չյունաշողի մ/դ	10	5	10
5	Տաշիր / Չորամուտ	գ. Չորամուտի մ/դ	41	10	10
ԳՈՒՔԱՐՔ ՀԱՄԱՅՆՔ					
Ընդամենը			350	106	92
1	Գուգարք / Ազնվաձոր	գ. Ազնվաձորի մ/դ	63	14	11
2	Գուգարք / Անտառամուտ	գ. Անտառամուտի հմ/դ	15	5	9
3	Գուգարք / Արջուտ	գ. Արջուտի մ/դ	101	14	12
4	Գուգարք / Եղեգնուտ	գ. Եղեգնուտի մ/դ	59	16	12
5	Գուգարք / Չորագետ	գ. Չորագետի հմ/դ	8	6	8
6	Գուգարք / Չորագյուղ	գ. Չորագյուղի հմ/դ	23	11	10
7	Գուգարք / Վահագնաձոր	գ. Վահագնաձորի հմ/դ	25	13	11
8	Գուգարք / Փամբակ	գ. Փամբակի հմ/դ	27	12	11
9	Գուգարք / Բագուժ	Բագուժի Մարշ. Բաղրամյանի անվ. հմ/դ	29	15	8

Դ. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

Արագածոտնի մարզում 2026-ին նախատեսվում է լուծարել 24 դպրոց, որտեղ ընդհանուր սովորում են 808 աշակերտ, աշխատում են 241 ուսուցիչ և 268 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ (աղյուսակ 4): Այսինքն, լուծարման է ենթակա մարզի դպրոցների մոտ 20 տոկոսը, որտեղ սովորում են աշակերտների 4 տոկոսը և աշխատում են ուսուցիչների ավելի քան 12 տոկոսը: Ակնհայտ է, որ այս ցուցանիշները կտրուկ բարձրանում են մարզի գյուղական բնակավայրերի մասնաբաժնում: Այսպես օրինակ, մարզի 121 դպրոցներից 12-ը գտնվում են քաղաքային բնակավայրերում (6 դպրոց՝ Աշտարակում, 3-ական դպրոց՝ Թալինում և Ապարանում), որտեղ սովորում են 4970 աշակերտ և աշխատում են 342 ուսուցիչ: Հետևաբար ստացվում է, որ այսօր մարզում լուծարվելու են գյուղական բնակավայրերի դպրոցների ավելի քան 22 տոկոսը՝ աշակերտների մոտ 6 և ուսուցիչների մոտ 15 տոկոս մասնաբաժնով:

Լուծարվող 24 դպրոցներից միայն մեկը՝ Օշականի Փ. Բակենյանի անվան հիմնական դպրոցն է, որ միակը չի համարվում տվյալ բնակավայրի համար:

Լուծարվող դպրոցներից 11-ը գտնվում են բարձրլեռնային կարագավիճակ ունեցող բնակավայրերում և հանդիսանում են տվյալ բնակավայրերի միակ դպրոցը: Սա մարզի բարձրլեռնային կարագավիճակ ունեցող 40 բնակավայրերի ավելի քան 25 տոկոսն է:

Լուծարման ենթակա ևս 10 դպրոց գտնվում են լեռնային կարագավիճակ ունեցող բնակավայրերում և կրկին միակն են համարվում: Այս ցուցանիշը մարզի լեռնային 25 բնակավայրերի 40 տոկոսն է կազմում:

Փակման ենթակա դպրոցների բնակավայրերում ապրում են մարզի բնակչության ավելի քան 10 տոկոսը, 141000-ից՝ 14196 մարդ: Իսկ մարզի գյուղական բնակչության մասնաբաժնում այդ ցուցանիշը բարձրանում է մինչև 14 տոկոս: Ստացվում է, որ դպրոցների փակման արդյունքում Արագածոտնի մարզի գյուղական բնակչությունից յուրաքանչյուր 7-ն արտագաղթի թիրախային շերտում է հայտնվում:

Ըստ Արագածոտնի համայնքների փակման ենթակա դպրոցների ամենաբարձր ցուցանիշն ունի Թալինը՝ թվով 9 դպրոց՝ մարզի լուծարման ենթակա դպրոցների 37,5 տոկոսը, որտեղ սովորում են 336 աշակերտ, աշխատում են 101 ուսուցիչ և 97 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ: Թալին համայնքի գյուղական 41 բնակավայրերում այսօր գործում է 39 դպրոց, որոնք միակն են: Այսինքն, համայնքի գյուղական դպրոցների ավելի քան 22 տոկոսը նախատեսվում է լուծարել, որտեղ սովորում են գյուղական բնակավայրերի աշակերտների 9,5 տոկոսը և աշխատում են ուսուցիչների մոտ 20 տոկոսը: Թալինի տարածաշրջանում փակման ենթակա 9 դպրոցներից 6-ն ունեն լեռնային բնակավայրի (համայնքի համապատասխան կարգավիճակ ունեցող բնակավայրերի մոտ 32 տոկոսը), իսկ 2-ը՝ բարձրլեռնային բնակավայրի կարգավիճակ, որը նման կարգավիճակ ունեցող 5 բնակավայրերի 40 տոկոսն է կազմում:

Արագածոտնի մարզում փակման ենթակա դպրոցների ցուցանիշով հաջորդը՝ Արագած համայնքն է՝ 8 դպրոց: Սա համայնքի 22 բնակավայրերում գործող 19 դպրոցի ավելի քան 42 տոկոսն է կազմում, որտեղ սովորում են 203 աշակերտ՝ համայնքի աշակերտների թվի

մոտ 5 տոկոսը և աշխատում են 60 ուսուցիչ՝ համայնքի ուսուցիչների թվի ավելի քան 26 տոկոսը: Ստացվում է, որ Արագածի տարածաշրջանում, որն ունի լեռնային տարաբնակեցմանը հատուկ համեմատաբար մեծ հեռավորությունների վրա ցրված տեղաբաշխում, 22 բնակավայրի համար գործարկվելու է ընդամենը 11 դպրոց, այսինքն բնակավայրերի ուղիղ կեսում դպրոցներ չեն գործարկվելու: Ավելացնենք նաև, որ փակվող 8 դպրոցներից 7-ը գտնվում են բարձրլեռնային կարգավիճակ ունեցող բնակավայրում:

Արագածոտնի մարզի փակման ենթակա մյուս 6 դպրոցները գտնվում են Ապարանի տարածաշրջանում, որտեղ սովորում են 202 աշակերտ, աշխատում են 64 ուսուցիչ և 65 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ: Համայնքի 27 բնակավայրերից միայն Ապարանն ունի քաղաքի կարգավիճակ, իսկ մնացած 26 գյուղական բնակավայրերում այսօր գործում է ընդամենը 19 դպրոց: Այսինքն, փակման է ենթակա Ապարան համայնքի գյուղական բնակավայրերի դպրոցների մոտ 37 տոկոսը, որն ընդգրկում է աշակերտական համակազմի 10,5 տոկոսը և ուսուցիչների թվի 27,2 տոկոսը: Ապարանի տարածաշրջանում փակվող դպրոցների բնակավայրերից 2-ն ունեն բարձրլեռնային, իսկ 4-ը՝ լեռնային բնակավայրերի կարգավիճակ:

Վերջում հավելենք, որ փակման են ենթակա հիմնականում մարզի լեռնային ու բարձրլեռնային կարգավիճակ ունեցող բնակավայրերի միակ դպրոցները, որի պատճառով այդ գոտիներից բնակչության արտահոսքը կարող է հանգեցնել տարածքների ամբողջական ամայացման, ինչն անդառնալի կորուստ կլինի Հայաստանի սոցիալ-տնտեսական, մշակութային և բնական ժառանգության համար:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Աղյուսակ 4

N	ՀԱՄԱՅՆՔ/ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԴՊՐՈՑ	ԱՇԱԿԵՐՏ	ՈՒՍՈՒՑԻՉ	ՕՃ. ԿԱԶՄ
ԱՇՏԱՐԱԿ					
1	Աշտարակ / Օշական	գ. Օշականի Փ.Բաբկենյանի անվ. հմ/դ	67	16	11
ԱՊԱՐԱՆ					
Ընդամենը			202	64	65
1	Ապարան / Չորագլուխ	Չորագլխի միջնակարգ դպրոց	38	17	12
2	Ապարան / Արայի	գ. Արայի հմ/դ	35	8	11
3	Ապարան / Թթուջուր	գ. Թթուջրի հմ/դ	28	9	10
4	Ապարան / Կայքի	գ. Կայքի մ/դ	68	16	17
5	Ապարան / Չքնաղ	գ. Չքնաղի հմ/դ	20	6	7
6	Ապարան / Սարալանջ	գ. Սարալանջի հմ/դ	13	8	8
ԹԱԼԻՆ					
Ընդամենը			336	101	97
1	Թալին / Դաշտաղեմ	գ. Դաշտաղեմի մ/դ	49	13	14
2	Թալին / Դիան	գ. Դիանի հմ/դ	8	6	8
3	Թալին / Զովասար	գ. Զովասարի մ/դ	44	18	8
4	Թալին / Ոսկեթաս	գ. Ոսկեթասի մ/դ	46	12	15
5	Թալին / Սուսեր	գ. Սուսերի մ/դ	38	10	9

6	Թալին / Վերին Սասնաշեն	գ. Վերին Սասնաշենի հմ/դ	8	8	10
7	Թալին / Վերին Բազմաբերդ	գ. Վերին Բազմաբերդի հմ/դ	57	10	10
8	Թալին / Ցամաքասար	գ. Ցամաքասարի հմ/դ	41	10	11
9	Թալին / Նոր Արթիկ	Նոր Արթիկի միջնակարգ դպրոց	45	14	12
ԱՐԱԳԱՏ					
Ընդամենը			203	60	95
1	Արագած / Ավշեն	Ավշենի հիմնական դպրոց	31	7	10
2	Արագած / Միջնատուն	գ. Միջնատունի հմ/դ	19	3	11
3	Արագած / Միրաք	գ. Միրաքի հմ/դ	11	- չունի -	15
6	Արագած / Շենկանի	գ. Շենկանիի հմ/դ	18	9	15
5	Արագած / Ջամշու	գ. Ջամշուի հմ/դ	31	10	9
6	Արագած / Սադունց	գ. Սադունցի Ս.Սուրադովի անվ. հմ/դ	36	9	12
7	Արագած / Սիփան	գ. Սիփանի մ/դ	28	14	8
8	Արագած / Կանախաշիր	Կանախաշիրի հմ/դ	29	8	15

Ե. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Տավուշի մարզից փակման ենթակա դպրոցների ցուցակում ներառված են 14 դպրոց (մարզի դպրոցների 17 տոկոսը), որտեղ ընդհանուր առմամբ սովորում են 870 աշակերտ (մարզի աշակերտական համակազմի 5 տոկոսը), աշխատում են 154 ուսուցիչ (մարզի ուսուցչական համակազմի 10 տոկոսը) և 187 վարչական ու սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ (աղյուսակ 5): Մակայն, քանի որ լուծարման ենթակա բոլոր 14 դպրոցները տեղաբաշխված են գյուղական բնակավայրերում, ապա անհրաժեշտ է վերոհիշյալ ցուցանիշները համադրել մարզի գյուղական բնակավայրերի համապատասխան ցուցանիշների հետ: Այդ պարագայում ստացվում է, որ լուծարման է ենթակա մարզի 52 գյուղական դպրոցների արդեն 27 տոկոսը, որից ընդամենը 3 դպրոց են, որ չեն համարվում միակը տվյալ բնակավայրի համար (Բագրատաշենի թիվ 2, Արծվաբերդի թիվ 2, Գոշի թիվ 2 հիմնական դպրոցները): Լուծարման ենթակա դպրոցներում սովորում են մարզի գյուղական աշակերտական համակազմի արդեն 8 տոկոսը, իսկ ուսուցիչների 14 տոկոսը:

Փակման ենթակա դպրոցների բնակավայրերի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 12284 մարդ, որը մարզի ընդհանուր բնակչության 10,4 տոկոսն է, իսկ գյուղական բնակչության մոտ 18 տոկոսը: Այսինքն, Տավուշի մարզում գյուղական բնակչությունից յուրաքանչյուր 5-ը հայտնվելու է այս գործարնթացի թիրախում և համարվելու է պոտենցիալ արտագաղթող:

Տավուշի մարզի կտրվածքով դպրոցների լուծարման գործընթացի իրական սպառնալիքներն արտահայտվում են սահմանամերձ բնակավայրերի կտրվածքով: Մասնավորապես, փակման ենթակա 14 դպրոցներից 8-ը գտնվում են սահմանամերձ բնակավայրերում, որը մարզի սահմանամերձ բնակավայրերի մոտ 9 տոկոսն է կազմում: Ստացվում է, որ մարզի սահմանամերձ բնակավայրերից գրեթե յուրաքանչյուր 10-րդում նախատեսվում է դպրոցը լուծարել: Ինչը հնարավոր արտագաղթի և սահմանամերձ տարածքների ամայացման պատաճառ կարող է հանդիսանալ և սահմանների ֆիզիկական անվտանգության տեսակետից լուրջ սպառնալիքներ կարող է առաջացնել:

Տավուշի մարզի համայնքներից Նոյեմբերյան խոշորացված համայնքում, որտեղ 21 բնակավայրերից 19-ը գյուղական բնակավայրեր են, նախատեսվում է լուծարել թվով 5 դպրոց (315 աշակերտ, 50 ուսուցիչ և 73 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ), որը համայնքի գյուղական բնակավայրերի դպրոցների ավելի քան 26 տոկոսն է կազմում, աշակերտական համակազմի 11 տոկոսը և ուսուցիչների թվի 15 տոկոսը: Հավելենք, որ Նոյեմբերյանում Ջուջևանի և Դեղձավանի սահմանամերձ բնակավայրերում փակվող դպրոցները միակն են:

Մարզի Տավուշ խոշորացած համայնքում նախատեսվում է փակել 4 դպրոց՝ 270 աշակերտ, 34 ուսուցիչ և 58 սպասարկող անձնակազմի ցուցանիշներով: Համայնքի գյուղական բնակավայրերում գործող 17 դպրոցների համատեքստում ստացվում է, որ լուծարման է ենթակա առկա գյուղական դպրոցների 23,5 տոկոսը, որտեղ սովորում են գյուղական բնակավայրերի աշակերտների ընդհանուր թվի 13,1 տոկոսը և աշխատում են

ուսուցիչների մոտ 16 տոկոսը: Տավուշ խոշորացված համայնքում Չինչին ու Իծաքար սահմանամերձ բնակավայրերում փակվող դպրոցները նույնպես միակն են համարվում:

Տավուշի մարզի Իջևան համայնքում փակման ենթակա բոլոր 3 դպրոցները գտնվում են սահմանամերձ՝ Լուսահովիտ, Աճարկուտ և Ակնաղբյուր բնակավայրերում, որտեղ սովորում են 76 աշակերտ, աշխատում է 24 ուսուցիչ և 32 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ:

Մարզի Դիլիջան համայնքում նախատեսվում է լուծարել 2 դպրոց՝ Խաճարձանի միակ միջնակարգ դպրոցը և Գոշի թիվ 2 հիմնական դպրոցը: Այստեղ ընդհանուր առմամբ սովորում են 84 աշակերտ, աշխատում է 23 ուսուցիչ և 24 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ:

Վերջում հավելենք, որ Տավուշի մարզի տնտեսությունը հիմնականում գյուղատնտեսական է և մեծ կախվածություն ունի տեղական համայնքներից: Դպրոցների փակումը կհանգեցնի աշխատունակ բնակչության արտահոսքի, ինչը կնվազեցնի ագրարային արտադրությունը և կխաթարի տեղական տնտեսական շրջանառությունը:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Աղյուսակ 5

N	ՀԱՄԱՅՆՔ/ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԴՊՐՈՑ	ԱՇԱԿԵՐՏ	ՈՒՍՈՒՑԻՉ	ՕՃ. ԿԱԶՄ
ԻԶԵՎԱՆ					
Շնչամենը			76	24	32
1	Իջևան / Լուսահովիտ	գ. Լուսահովիտի հմ/դ	<u>28</u>	<u>8</u>	<u>12</u>
2	Իջևան / Աճարկուտ	գ. Աճարկուտի հմ/դ	<u>13</u>	<u>7</u>	<u>9</u>
3	Իջևան / Ակնաղբյուր	գ. Ակնաղբյուրի հմ/դ	<u>35</u>	<u>9</u>	<u>11</u>
ՆՈՑԵՄԲԵՐՑԱՆ					
Շնչամենը			315	50	73
1	Նոյեմբերյան / Ջուջևան	գ. Ջուջևանի մ/դ	<u>54</u>	<u>12</u>	<u>17</u>
2	Նոյեմբերյան / Լճկաձոր	գ. Լճկաձորի հմ/դ	<u>95</u>	<u>11</u>	<u>14</u>
3	Նոյեմբերյան / Դեղձավան	գ. Դեղձավանի հմ/դ	<u>50</u>	<u>9</u>	<u>13</u>
4	Նոյեմբերյան / Բարեկամավան	գ. Բարեկամավանի մ/դ	<u>17</u>	<u>7</u>	<u>10</u>
5	Նոյեմբերյան / Բագրատաշեն	գ. Բագրատաշենի թիվ 2 հմ/դ	<u>99</u>	<u>11</u>	<u>19</u>
ՏԱՎՈՒՇ					
Շնչամենը			270	34	58
1	Տավուշ / Չինչին	գ. Չինչինի մ/դ	<u>44</u>	<u>12</u>	<u>13</u>
2	Տավուշ / Չինարի	գ. Չինարիի մ/դ	<u>91</u>	<u>5</u>	<u>19</u>
3	Տավուշ / Իծաքար	գ. Իծաքարի հմ/դ	<u>29</u>	<u>7</u>	<u>10</u>
4	Տավուշ / Արծվաբերդ	գ. Արծվաբերդի թիվ 2 հմ/դ	<u>106</u>	<u>10</u>	<u>16</u>
ԴԻԼԻՋԱՆ					
Շնչամենը			84	23	24
1	Դիլիջան / Խաչարձան	գ. Խաչարձանի մ/դ	<u>49</u>	<u>11</u>	<u>12</u>
2	Դիլիջան / Գոշ	գ. Գոշի թիվ 2 հմ/դ	<u>35</u>	<u>12</u>	<u>12</u>

Զ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Գեղարքունիքի մարզում նախատեսվում է լուծարել 15 դպրոց, որոնք բոլորն էլ գտնվում են գյուղական բնակավայրերում: 15 դպրոցներից 14-ը միակն են համարվում տվյալ բնակավայրի համար, բացառություն է կազմում միայն Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի տարրական դպրոցը: Մարզի փակման ենթակա 15 դպրոցներում սովորում է 440 աշակերտ, աշխատում է 150 ուսուցիչ և 132 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ: Այս ցուցանիշները համադրելով մարզի գյուղական բնակավայրերի համապատասխան ցուցանիշների հետ կատանանք հետևյալ պատկերը. փակվում է մարզի գյուղական դպրոցների ավելի քան 15 տոկոսը, որն ընդգրկում է աշակերտական համակազմի 2,3 տոկոսը և ուսուցիչների թվի 8,1 տոկոսը:

Փակվող դպրոցներից 8-ը տեղաբաշխված են սահմանամերձ բնակավայրերում, 10 բնակավայր ունեն բարձրլեռնային, իսկ 5-ը՝ լեռնային բնակավայրի կարգավիճակ:

Լուծարման ենթակա դպրոցների բնակավայրերի ընդհանուր բնակչության թիվը կազմում է 8771 մարդ, որը կազմում է մարզի գյուղական բնակչության մոտ 5 տոկոսը:

Ընդհանուր պատկերը շատ առավել վտանգավոր է արտահայտվում մարզի առանձին տարածաշրջանների կտրվածքով, որտեղ ամենախոցելին՝ Վարդենիսի տարածաշրջանն է: Մասնավորապես, Վարդենիս համայնքում նախատեսվում է լուծարել թվով 11 դպրոց, որը մարզի լուծարման ենթակա դպրոցների ավելի քան 73 տոկոսն է կազմում, աշակերտների թվի 68 տոկոսը և ուսուցչական համակազմի՝ 74 տոկոսը: Համայնքի գյուղական 38 բնակավայրերում, ըստ emis.am հարթակի, գործում են 30 դպրոց: Ստացվում է, որ Վարդենիսի տարածաշրջանի գյուղական գործող դպրոցների 36,6 տոկոսը լուծարման է ենթակա, որտեղ սովորում են համայնքի գյուղական բնակավայրերի աշակերտների 10,5 տոկոսը (440 աշակերտից՝ 302-ը) և աշխատում են ուսուցիչների 25,5 տոկոսը (150 ուսուցչից՝ 111-ը):

Վարդենիսում փակման ենթակա 11 դպրոցներից 6-ը գտնվում են սահմանամերձ բնակավայրերում: Այսինքն, Վարդենիս խոշորացված համայնքի 13 սահմանամերձ բնակավայրերից 6-ում փակում են միակ դպրոցը, որտեղ սովորում են համայնքի սահմանամերձ բնակավայրերի աշակերտների մոտ 23 տոկոսը և աշխատում են ուսուցիչների՝ մոտ 39 տոկոսը:

Բացի դրանից, փակվող 11 դպրոցների բնակավայրերից 10-ը ունեն բարձրլեռնային բնակավայրի կարգավիճակ, բացառություն է կազմում միայն Փամբակ բնակավայրը, որն իր հերթին ունի լեռնային բնակավայրի կարգավիճակ:

Գեղարքունիքի մարզում ևս 3 դպրոց նախատեսվում է լուծարել Ճամբարակի տարածաշրջանում՝ Անտառամեջի, Գետիկի և Կալավանի միջանակարգ դպրոցները, որոնք նույնպես միակն են տվյալ բնակավայրերի համար: Այստեղ ընդհանուր սովորում են 102 աշակերտ, աշխատում են 33 ուսուցիչ և 20 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ:

Վերջում ամփոփենք, որ մարզում 14 բնակավայրերի միակ դպրոցների փակման գործընթացը լի է ինչպես ժողովրդագրական ու տարաբնակեցման, այնպես տնտեսական

ու անվտանգային լուրջ սպառնալիքներով: Մասնավորապես, Գեղարքունիքի մարզը միշտ առանձնացել է անասնապահության բարձորակ արտադրանքով, որի նախապայմանը՝ լեռնային ու բարձր լեռնային բնակավայրերի խոտհարքերի ու արոտավայրերի բարձր որակական կառուցվածքն է եղել: Ակնհայտ է, որ դպրոցների փակման գործընթացն ի վերջո հանգեցնելու այդ բնակավայրերի դատարկմանը և անասնապահական մթերքների արտադրական ներուժի նվազմանը:

Խնդիրը շատ ավելի վտանգավոր է սահմանանին անվտանգության տեսանկյունից, քանի որ հատկապես՝ Վարդենիսի տարածաշրջանում, այս գործընթացի հետևանքով սահմանային բնական հսկողությունը խիստ խոցելի է դառնալու:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Աղյուսակ 6

N	ՀԱՄԱՅՆՔ/ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԴՊՐՈՑ	ԱՇԱԿԵՐՏ	ՈՒՍՈՒՑԻՉ	ՕԺ. ԿԱԶՄ
ՎԱՐԴԵՆԻՍ					
Ընդամենը			302	111	112
1	Վարդենիս / Փամբակ	գ. Փամբակի մ/դ	62	9	11
2	Վարդենիս / Տրետուք	գ. Տրետուքի մ/դ	26	16	11
3	Վարդենիս / Ջաղացաձոր	գ. Ջաղացաձորի մ/դ	15	10	9
4	Վարդենիս / Նորաբակ	գ. Նորաբակի մ/դ	22	9	7
5	Վարդենիս / Կույթ	գ. Կույթի մ/դ	13	9	11
6	Վարդենիս / Լճավան	գ. Լճավանի Ա.Խաչատրյանի անվ. մ/դ	60	7	20
7	Վարդենիս / Գեղամաբակ	գ. Գեղամաբակի հմ/դ	8	7	8
8	Վարդենիս / Ավագան	գ. Ավագանի հմ/դ	28	10	8
9	Վարդենիս / Ախպրաձոր	գ. Ախպրաձորի մ/դ	45	14	11
10	Վարդենիս / Կուտականի	գ. Կուտականի մ/դ	17	13	10
11	Վարդենիս / Ազատ	գ. Ազատի հմ/դ	6	7	6
ՃԱՄԲԱՐԱԿ					
Ընդամենը			102	33	20
1	Ճամբարակ / Անտառամեջ	գ. Անտառամեջի մ/դ	25	10	3
2	Ճամբարակ / Գետիկ	գ. Գետիկի մ/դ	57	14	10
3	Ճամբարակ / Կալավան	գ. Կալավանի մ/դ	20	9	7
ՄԱՐՏՈՒՆԻ					
1	Մարտունի / Ծովինար	գ. Ծովինարի տ/դ	36	6	14

Է. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

Վայոց Ձորի մարզում նախատեսվում է լուծարել 16 դպրոց, որը ենթադրում է, որ փակման ենթակա է մարզի 48 դպրոցից յուրաքանչյուր 3-րդ դպրոցը՝ 33,3 տոկոսը, որը 40 տոկոսի է հասնում, եթե փակվող դպրոցների ցուցանիշը համադրում ենք մարզի գյուղական 40 դպրոցների ցուցանիշի հետ:

Փակման ենթակա դպրոցներում 2025-26 ուստարում սովորում է 391 աշակերտ, աշխատում է 150 ուսուցիչ և 162 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ: Ըստ այդմ կարող ենք փաստել, որ մարզի լուծարման ենթակա դպրոցներում սովորում է գյուղական դպրոցների աշակերտների (3655 աշակերտ) 10,6 տոկոսը և աշխատում է ուսուցիչների (518 ուսուցիչ) 29 տոկոսը: Այսինքն, այս գործընթացի արդյունքում թիրախավորված է Վայոց Ձորի մարզի գյուղական դպրոցների յուրաքանչյուր 10-րդ աշակերտը և յուրաքանչյուր 3-րդ ուսուցիչը (աղյուսակ 7):

Մարզի լուծարվող 16 դպրոցներից 12-ը գտնվում են լեռնային կարագվիճակ ունեցող բնակավայրում: Փաստենք, որ այդ բնակավայրերը կազմում են Վայոց Ձորի մարզի համապատասխան կարագվիճակ ունեցող 16 բնակավայրերի 87,8 տոկոսը: Ըստ էության, հնարավոր ամայացման ու քանդման տակ է հայտնվում մարզի տարաբնակեցման լեռնային կարևոր գոտին: Նշենք նաև, որ տվյալ բնակավայրերից երկուսը՝ Վայք համայնքի Սերս և Բարձրունի բնակավայրերը սահմանամերձ են:

Վայոց Ձորում փակվող դպրոցներից ևս 2-ը գտնվում են բարձրլեռնային կարագվիճակ ունեցող բնակավայրերում՝ Եղեգնաձորի Վարդահովիտը և Վայքի՝ Կարմրաշենը:

Փակման ենթակա դպրոցների բոլոր բնակավայրերում միասին ապրում է 4375 մարդ, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության (40900 մարդ) մոտ 9 տոկոսը: Սակայն, քանի այդ բոլոր դպրոցները գտնվում են գյուղական բնակավայրերում, ապա ճիշտ կլինի այդ ցուցանիշը համադրել մարզի գյուղական բնակչության հետ (32200 մարդ), որի պարագայում այն բարձրանում է մինչև 14 տոկոս: Սա ցույց է տալիս, որ դպրոցների լուծարման գործընթացի հետևանքով թիրախավորված են Վայոց Ձորի գյուղացիներից յուրաքանչյուր 7-րդը:

Լուծարվող դպրոցների բնակավայրերի վարչական ընդհանուր մակերեսը կազմում է ավելի քան 401 կմ², որը մարզի ընդհանուր տարածքի ավելի քան 17 տոկոսն է, որն ըստ էության, դատարարվում է ամայացման:

Վայոց Ձորի համայնքներից ամենաշատ՝ թվով 8 դպրոց, փակման է ենթակա Վայքում: Այս ցուցանիշը համայնքի 18 բնակավայրերում գործող 19 դպրոցի ավելի քան 42 տոկոսն է կազմում: Սակայն, եթե համայնքի ընդհանուր ցուցանիշից դուրս ենք բերում քաղաքների՝ Ջերմուկի երեք և Վայքի երկու գործող դպրոցները, ապա ստացվում է, որ այսօր համայնքի գյուղերում գործող 14 դպրոցից փակման ենթակա ավելի քան 57 տոկոսը և Վայքի 16 գյուղական բնակավայրերի համար գործարկվելու է ընդամենը 6 դպրոց: Այսինքն, այս գործընթացի արդյունքում Վայք համայնքի գյուղական բնակավայրերից դպրոց է գործարկվելու միայն յուրաքանչյուր 3-րդ-ում:

Վայքի տարածաշրջանում լուծարման ենթակա դպրոցներում սովորում են 223 աշակերտ, որը համայնքի գյուղերի աշակերտական համակազմի (728 աշակերտ) 30,6 տոկոսն է կազմում: Մա փաստում է, որ այս գործընթացի հետևանքը կրելու է մարզի գյուղական բնակավայրերի աշակերտներից յուրաքանչյուր երրորդը: Լուծարման ենթակա դպրոցներում աշխատում է 78 ուսուցիչ, որը Վայքի գյուղական ուսուցչական համակազմի 46,4 տոկոսն է՝ գրեթե յուրաքանչյուր երկրորդը:

Եղեգնաձոր համայնքում նախատեսվում է լուծարել ևս 8 դպրոց, որը տարածաշրջանի գյուղական բնակավայրերում գործող 24 դպրոցների 1/3-ն է: Այս դպրոցներում աշխատում է համայնքի գյուղական բնակավայրերի ուսուցիչների մոտ 20 տոկոսը. 322-ից՝ 68-ը և սովորում է աշակերտների 5,5 տոկոսը. 2682-ից՝ 148-ը:

Վերջում հավելենք, որ դպրոցների փակման ցուցակում Վայոց Ձորից ներառված է նաև Եղեգնաձոր համայնքի Մոզրովի դպրոցը, որի վերաբերյալ emis.am հարթակում տվայլներ չկան, իսկ «Հետք» պարբերականի տեղեկություններով, այն 2022-23 ուստարում արդեն փակվել է⁷:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ *Աղյուսակ 7*

N	ՀԱՄԱՅՆՔ/ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԴՊՐՈՑ	ԱՇԱԿԵՐՏ	ՈՒՍՈՒՑԻՉ	ՕՃ. ԿԱԶՄ
ՎԱՅՔ					
Ընդամենը			223	78	95
1	Վայք / Զեղեա	ՀՀ Վայոց ձորի մարզի Զեղեայի հմ/դ	9	10	12
2	Վայք / Սերս	գ. Սերսի հմ/դ	4	1	8
3	Վայք / Մարավան	գ. Մարավանի հմ/դ	15	6	11
4	Վայք / Կարմրաշեն	գ. Կարմրաշենի մ/դ	2	5	11
5	Վայք / Բարձրունի	գ. Բարձրունու մ/դ	32	12	15
6	Վայք / Արտավան	գ. Արտավանի մ/դ	28	11	9
7	Վայք / Արին	գ. Արինի մ/դ	49	13	13
8	Վայք / Ազատեկ	գ. Ազատեկի մ/դ	84	20	14
ԵՂԵԳՆԱՁՈՐ					
Ընդամենը			148	64	65
1	Եղեգնաձոր / Հերմոն	գ. Հերմոնի հմ/դ	17	7	12
2	Եղեգնաձոր / Հորս	գ. Հորսի հմ/դ	3	7	6
3	Եղեգնաձոր / Հորբատեղ	գ. Հորբատեղի հմ/դ	12	8	9
4	Եղեգնաձոր / Թառաթումբ	գ. Թառաթումբի մ/դ	42	10	14
5	Եղեգնաձոր / Մալլի	գ. Մալլիի հմ/դ	31	10	9
6	Եղեգնաձոր / Վարդահովիտ	գ. Վարդահովիտի հմ/դ	4	10	2
7	Եղեգնաձոր / Աղնջաձոր	գ. Աղնջաձորի մ/դ	39	12	13
8	Եղեգնաձոր / Աղնջաձոր	գ. Մոզրովի դպրոց	4	8	2

⁷ Տե՛ս <https://hetq.am/hy/article/169710>, հասանելի՝ 01.12.2025

Ը. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

Կոտայքի մարզում 2026-ին նախատեսվում է լուծարել 9 դպրոց, որտեղ 2025-26 ուստարում սովորում է 508 աշակերտ, աշխատում է 105 ուսուցիչ և 112 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ (աղյուսակ 8):

Ակնհայտ է, որ Կոտայքը չունենալով արտաքին սահմաններ, չունի նաև սահմանամերձ բնակավայրեր: Եվ դպրոցների փակման գործընթացի թիրախում հիմնականում հայտնվել են լեռնային բնակավայրերը: Այսպես օրինակ, փակման ենթակա 9 դպրոցներից 5-ը գտնվում են լեռնային, իսկ 2-ը՝ բարձրլեռնային կարգավիճակ ունեցող բնակավայրերում: Ըստ այդմ, նախատեսվում է լուծարել մարզի լեռնային կարգավիճակ ունեցող 20 գյուղական բնակավայրերի 25 տոկոսի միակ դպրոցները: Իսկ բարձրլեռնային բնակավայրերի մասով այդ ցուցանիշը հասնում է 40 տոկոսի, քանի որ մարզի բարձրլեռնային կարգավիճակ ունեցող 5 բնակավայրերից 2-ում նախատեսվում է լուծարել միակ դպրոցը:

Լուծարվող բոլոր դպրոցները հանդիսանում են տվյալ բնակավայրերի միակ դպրոցները որտեղ ընդհանուր առմամբ բնակվում է 4717 մարդ՝ մարզի գյուղական բնակչության 3,2 տոկոսը, իսկ բնակավայրերի վարչական տարածքների զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում է 105 կմ², մարզի ընդհանուր տարածքի 5,5 տոկոսը:

Մարզի տարածաշրջաններից 5 դպրոց նախատեսվում է լուծարել Աբովյան համայնքում (253 աշակերտ, 54 ուսուցիչ և 64 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ), 3 դպրոց՝ Նաիրի համայնքում (157 աշակերտ, 36 ուսուցիչ և 39 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ) և 1 դպրոց Հրազդան համայնքում՝ Փյունիկ գյուղական բնակավայրի միակ դպրոցը (58 աշակերտ, 15 ուսուցիչ և 9 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ):

Աղյուսակ 8

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

N	ՀԱՄԱՅՆՔ/ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԴՊՐՈՑ	ՍՇԱԿԵՐՏ	ՈՒՍՈՒՑԻՉ	ՕԺ. ԿԱԶՄ
ՆԱԻՐԻ					
Ընդամենը			157	36	39
1	Նաիրի / Թեղենիք	գ. Թեղենիքի Վ.Զինիշյանի անվ. մ/դ	40	13	12
2	Նաիրի / Սարալանջ	գ. Սարալանջի հմ/դ	54	11	12
3	Նաիրի / Քարաշամբ	գ. Քարաշամբի մ/դ	63	12	15
ՀՐԱԶԴԱՆ					
Ընդամենը			58	15	9
1	Հրազդան / Փյունիկ	գ. Փյունիկի մ/դ	58	15	9
ԱԲՈՎՅԱՆ					
Ընդամենը			293	54	64
1	Աբովյան / Գեղարդ	գ. Գեղարդի մ/դ	43	7	20
2	Աբովյան / Հատիս	գ. Հատիսի Վ.Վարդանյանի անվ. մ/դ	50	13	11
3	Աբովյան / Հացավան	գ. Հացավանի մ/դ	82	14	10
4	Աբովյան / Ողջաբերդ	գ. Ողջաբերդի մ/դ	104	15	6
5	Աբովյան / Սևաբերդ	գ. Սևաբերդի մ/դ	14	5	17

Թ/Ժ. ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԵՐ

Փակվող դպրոցների ցուցակում ամենաքիչ ներկայացվածությունն ունեն Արմավիրի և Արարատի մարզերը: Ինչպես արդեն նշել ենք, դա բացատրվում է մարզերի տարաբնակեցման առանձնահատկություններով, երբ հարթավայրային տարածքը հնարավորություն է տալիս և՛ գյուղերի մարդաշատության, և՛ խիտ բնակեցման համար:

Այնուամենայնիվ, Արմավիրի մարզում նախատեսվում է լուծարել 7 դպրոց, որտեղ սովորում է 367 աշակերտ, աշխատում է 69 ուսուցիչ և 75 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ (աղյուսակ 9): Ակնհայտ է, որ այս թվերը փոքր մասնաբաժին ունեն մարզի համապատասխան ցուցանիշներում: Մակայն, մանրամասն վերլուծությունը փաստում է, որ Արմավիրի մարզում հատուկ թիրախավորված է Բաղրամյան համայնքը, որտեղ նախատեսվում է փակել 5 դպրոց: Դրանք բոլորն էլ հանդիսանում են միակը տվյալ բնակավայրի համար և կազմում են համայնքի 15 դպրոցների 30% մասնաբաժինը: Փակվող դպրոցներում սովորում են Բաղրամյանի տարածաշրջանի աշակերտական համակազմի գրեթե 9 տոկոսը (2961-ից՝ 256 աշակերտ) և աշխատում են ուսուցչական համակազմի 18,3 տոկոսը (251-ից՝ 46 ուսուցիչ): Հատկապես ուշադրության է արժանի Բագարանի միակ դպրոցը փակելու ցանկությունը, որտեղ սովորում է 110 աշակերտ, աշխատում՝ 12 ուսուցիչ և 17 սպասարկող անձնակազմի ներկայացուցիչ: Հատուկ շեշտենք, որ Բագարանը սահմանամերձ կարգավիճակ ունեցող բնակավայր է:

Մարզում ևս 1-ական դպրոցներ նախատեսվում է լուծարել Արմավիր համայնքում՝ Բերքաշատի 90 հոգանոց աշակերտական համակազմ ունեցող միջնակարգ դպրոցը և Վաղարշապատ համայնքի Լեռնամերձի հիմնական դպրոցը, որոնք նույնպես միակն են տվյալ բնակավայրերում:

Ինչ վերաբերում է Արարատի մարզին, ապա այստեղ նախապես պլանավորված էր լուծարել 4 դպրոց: Մակայն, ինչպես արդեն նշել ենք, ԿԳՄՍ նախարարի մեկ այլ հրամանով փակման ենթակա դպրոցների ցուցակից հանվել է Մասիս համայնքի Արևաբույրի 199 աշակերտական կազմ ունեցող դպրոցը, որն անհասկանալի է թե ընդհանրապես ի՞նչ չափանիշներով է հայտնվել նախնական ցուցակում:

Արարատում նախատեսվում է լուծարել Մասիս համայնքի Ազատաշենի 68 աշակերտ ունեցող հիմնական դպրոցը և Արարատ համայնքի Լանջառի ու Տիգրանաշենի հիմնական դպրոցները (աղյուսակ 10):

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

N	ՀԱՄԱՑՆՔ/ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԴՊՐՈՑ	ԱՇԱԿԵՐՏ	ՈՒՍՈՒՑԻՉ	ՕՃ. ԿԱԶՄ
ԲԱՂՐԱՍՅԱՆ					
Ընդամենը			256	46	48
1	Բաղրամյան / Արտամետ	գ. Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվ. մ/դ	34	11	9
2	Բաղրամյան / Բազարան	գ. Բազարանի մ/դ	110	12	17
3	Բաղրամյան / Հուշակերտ	գ. Հուշակերտի մ/դ	81	16	13
4	Բաղրամյան / Տավորիկ	գ. Տավորիկի հմ/դ	31	7	9
5	Բաղրամյան / Կողբավան	գ. Կողբավան	-	-	-
ԱՐՄԱՎԻՐ					
1	Արմավիր / Բերքաշատ	գ. Բերքաշատի մ/դ	90	13	15
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ					
1	Վաղարշապատ / Լեռնամերձ	գ. Լեռնամերձի հմ/դ	21	10	12

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

N	ՀԱՄԱՑՆՔ/ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԴՊՐՈՑ	ԱՇԱԿԵՐՏ	ՈՒՍՈՒՑԻՉ	ՕՃ. ԿԱԶՄ
ՄԱՄԻՍ					
1	Մասիս / Ազատաշեն	գ. Ազատաշենի հմ/դ	68	10	9
ԱՐԱՐԱՏ					
Ընդամենը			23	7	24
1	Արարատ / Լանջառ	գ. Լանջառի հմ/դ	21	6	16
2	Արարատ / Տիգրանաշեն	գ. Տիգրանաշենի Պարույր Սևակի անվան հմ/դ	2	1	8

ԲԱԺԻՆ 3-Ը

ՀՀ-ՈՒՄ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԲԱԶՄԱԶՍՓ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախորդ բաժիններում իրականացված վերլուծությամբ փաստվում է, որ դպրոցների փակման գործընթացն հնարավոր չէ գնահատել միաչափ ու միազիծ տրամաբանությամբ:

Բուն գործընթացն արտաքուստ հիմնված է միկրո-տնտեսական և կրթական որակի իբր բարելավման պարզունակ տրամաբանության վրա: Այս համատեքստում առաջ է քաշվում խիստ պարզունակ դատողություններ. աշակերտ/ուսուցիչ հարաբերակցության օպտիմալացման անհրաժեշտություն, փոքր դպրոցների պահպանման ծախսերի ոչ նպատակայնություն, փոքրաթիվ աշակերտով համալրված դասարանում կրթական որակի ապահովման անհնարինություն, հեռավոր գյուղերում ուսուցչական համակազմը լրացնելու բնական դժվարություններ և այլն:

Սակայն, այս գործընթացի հետևանքները պետք է գնահատել բացառապես մակրո-ռազմավարական մակարդակում, հիմնված՝ ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության, ժողովրդագրական հեռանկարի, տարբանակեցման համակարգի կենսունակության, սոցիալ-տնտեսական զարգացման, կրթական ցանցի ամբողջականության ու մշակութային յուրահատկությունների պահպանման բազմակողմ ու բազմաչափ կապերի հաշվառման ու մոդելավորման հիմքի վրա:

Այս հիմքով բնական հարց է առաջանում, նման մասշտաբի, հետևանքների անկասելիությամբ ու անշրջելիությամբ առանձնացող գործընթաց սկսել միայն միկրո-տնտեսական պարզունակ դատողություններով ու հիմնավորումներով, առնվազն արժանահավատ չի թվում, որքան էլ համոզիչ լինեն պատասխանատուների դիլենտանտության վերաբերյալ մասնագիտական ու ոչ մասնագիտական պնդումները: Իսկ դա իր հերթին թույլ է տալիս ունենալ մտածումներ գյուղերի դատարկման՝ անվտագային համակարգի խոցելության բարձրացման, տարաբնակեցման պատմական համակարգի քայքայման և կրթական ու մշակութային տեղական ժառանգությունների ոչնչացման դիտավորության մասին:

Ըստ այդմ, հետևանքների բազմաչափ մոդելավորումից, իրական սպառնալիքների բացահայտումից ու հանրայնացումից զատ անհարաժեշտ է խորապես համոզվել ոչ հայանպաստ այս գործընթացի ոչ մտածված կամ դիտավորյալ լինելու հարցում: Սակայն, այս խնդիրն առայժմ դուրս է մնում մեր հետազոտության շրջանակներից, հույս ունենալով հարցի պատասխանի որոնումը տեսնել հետազոտության արդյունքների շրջանառության մեջ՝ հանրային, մասնագիտական, քաղաքական ու իրավական բանավեճերի ու հիմնավորումների արդյունքում:

Եվ այսպես. Հայաստանի Հանրապետությունում «ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման» ծրագրի քողի տակ իրականացվող 231 դպրոցների լուծարման գործընթացի իրական սպառնալիքների բացահայտման համար առանձնացրել ենք ներքոհիշյալ շերտերն՝ իրենց բովանդակությամբ.

Ա.ԿՐԹԱԿԱՆ ՈՒՈՐՏ – ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՔԱՆԴՄԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔ

Կրթական ոլորտում դպրոցների փակման գործընթացի առաջնային հետևանքը գյուղական կրթության մոդելի վերացումն է: 231 դպրոցից 218-ը միակն է համայնքում, այսինքն՝ փակումը հավասարազոր է գյուղում դպրոցական կրթության լիարժեք դադարեցմանը: Վերջինիս բացասական ազդեցության համար կարելի է առանձնացնել երեք շերտ.

- **Մանկավարժական կադրերի ոչնչացում.** Գյուղերում մանկավարժական կադրային բազան անգնահատելի ռեսուրս է, թե՛ փոքր գյուղերում աշխատելու արդեն ձևավորված սոցիալական ադապտացիայի տեսանկյունից, թե՛ բազմաառարկայական մասնագիտական փորձի շնորհիվ, որի ձևավորումը՝ ֆինանսական, ժամանակային և սոցիալական տեսակետից բավականին դժվար գործընթաց է: Ակնհայտ է, որ դպրոցների փակման հետևանքով գյուղերից ուսուցիչների տեղափոխումը այլ բնակավայրեր կամ նրանց վերամասնագիտացումն ամբողջապես ոչնչացնելու է արդեն ձևավորած մանկավարժական կադրային տվյալ բազան:
- **Կրթական ենթակառուցվածքի անդառնալի կորուստ.** Փակված դպրոցի շենքերը, գրադարանները, սպորտային համալիրները հաճախ լքվում են և քանդվում, ինչը հետագայում որևէ կրթական ծրագիր վերականգնելու հնարավորության տեսանկյունից գրեթե անիրագործելի է:
- **Սոցիալ-կրթական միջավայրի զրոյացում.** Փակվող դպրոցների բնակավայրերում ամբողջապես զրոյացվում է սոցիալ-կրթական միջավայրը, որովհետև նախ այլ բնակավայրեր դպրոց հաճախող աշակերտներն և ուսուցիչներն օտարանում են սեփական բնակավայրի սոցիալ-կրթական կյանքից, բացի դրանից այդ գյուղերում ամբողջապես բացակայելու է այլ բնակավայրերից եկող ուսուցիչների սոցիալ-կրթական ազդեցությունը:

Եվ եթե վերոնշյալը պրոյեկտենք դպրոցների փակման ամբողջ գործընթացի վրա՝ գյուղական բնակավայրերում լուծարման ենթակա դպրոցները կազմում են ՀՀ գյուղական կրթական ցանցի 28 տոկոսը, ապա հիմնավոր է դառնում գյուղական կրթական մոդելի համակարգային քանդման սպառնալիքը:

Վերջում հավելենք, որ եթե նույնիսկ դրական համարենք պատասխանատուների այն հիմնավորումը, որ կենտրոն դպրոցներում կրթության որակը համեմատաբար բարձր է լուծարվող դպրոցների կրթական որակից, այնուամենայնիվ այլ բնակավայրեր տեղափոխվող աշակերտների համար ուսումնական հավասար հնարավորություններ չեն կարող ապահովել, որովհետև նախ մեծ է տրանսպորտային կախվածությունն ու անվտանգության ռիսկերը (լեռնային ճանապարհներ, ձմեռային պայմաններ) և երկրորդը՝ անպայմանորեն խախտվում է այդ աշակերտների օրվա կառուցվածքը, քանի որ ճանապարհներին վատնած ժամանակը նվազեցնում է ինքնազարգացման, լրացուցիչ պարապմունքների հնարավորությունը:

Բ. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈԼՈՐՏ – ԳՅՈՒՂԵՐԻ «ՄԱՀՎԱՆ» ՍՅԵՆԱՐ

Գյուղերում միակ դպրոցների փակման գործընթացն անխուսափելիորեն բերելու է այդ բնակավայրի «կրիտիկական զանգվածի» կորուստ: Ըստ մասնագիտական դիտարկման, յուրաքանչյուր համայնք ունի բնակչության նվազագույն թվաքանակ, որի դեպքում այն կարող է վերաբտադրվել և պահպանել ինքնատիպությունը: Դպրոցի փակումը հանգեցնում է երիտասարդ ընտանիքների անմիջական ելքի (նրանց, ում համար երեխայի կրթությունը առաջնահերթ է): Սա շղթայական ռեակցիայի պատճառ է դառնում:

Երիտասարդների հեռանալ ⇒ ծնելիության կտրուկ անկում ⇒ սպասարկման ոլորտի (խանութ, բուժկետ) անջահավետություն ⇒ մնացած միջին տարիքի բնակչության արտագաղթ ⇒ մնում են միայն տարեցները ⇒ բնակավայրը դադարում է վերաբտադրվել:

Այսպիսով, դպրոցների փակման գործընթացը, տվյալ բնակավայրերի համար պարտադիր է դարձնում զուտ բացասական միգրացիա: Սակայն, ժողովրդագրական ժամանակակից միտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն ներքին միգրացիայի, երբ բնակչությունը մի գյուղից տեղափոխվում է մյուսը, այս դեպքում գործընթացը միակողմանի է՝ գյուղ → խոշոր քաղաք (հաճախ՝ մարզկենտրոն/Երևան): Դա խտտացնում է բնակչությունը մի քանի կենտրոններում և ստեղծում է «դեմոգրաֆիկ անապատներ» պարագծային շրջաններում:

Ժողովրդագրական ոլորտում դպրոցների լուծարման այս գործընթացի բացասական ազդեցություններից պետք է հատկապես առանձնացնել դեմոգրաֆիկական ճնշման աճը սահմանին: Նախորդ բաժիններում կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ զգալի թվով փակվող դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում և հանդիսանում են միակը (ընդհանուր թվով 55 (52) դպրոց՝ 1690 աշակերտով- *գծապատկեր 6*): Այս գյուղերի բնակչության հավանական նվազումն իր հերթին անպայմանորեն նվազեցնելու է Հայաստանի ժողովրդագրական ներկայությունը սահմանագոտում, ինչը երկարաժամկետ (նույնիսկ՝ միջնաժամկետ կտրվածքով) սահմանային տարածքների վերահսկողության թուլացում է նախանշում:

Գ. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՈԼՈՐՏ – ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՓԼՈՒԶՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

ՀՀ տարաբնակեցման համակարգը, որն արտահայտում է ՀՀ բնակավայրերի ձևավորման ու զարգացման պատմաաշխարհագրական ընթացքը, իրենից ներկայացնում է ամբողջական համակարգ, որտեղ յուրաքանչյուր բնակավայր կատարելով իր սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական ինքնատիպ գործառույթը, միաժամանակ ապահովում է ամբողջ համակարգի կենսունակությունը: Այսինքն, յուրաքանչյուր բնակավայր, անկախ բնակչության թվից ու զբաղեցրած մակերեսից, կազմում է տարաբնակեցման ամբողջական ցանցի կարևորագույն բջիջը, որի շնորհիվ է իրականացվում հասարակական կյանքի լիարժեքության համար անհրաժեշտ կետունակ էներգիայի շրջանառությունը՝ տարածքային քաղաքականության միջոցով: Հետևաբար, համակարգի յուրաքանչյուր տարրի կորուստն իր բացասական ազդեցությունն է ունենում

ամբողջ համակարգի վրա: Այսինքն, Հայաստանի յուրաքանչյուր բնակավայրի «մահ» անխուսափելիորեն բացասական ազդեցություն է թողնելու հանրապետության տարաբնակեցման ամբողջ համակարգի վրա:

Կրկին շեշտադրենք, որ տարաբանակցման ամբողջական համակարգի ձևավորումն ինքնին ենթադրում է պատմական երկար ժամանակի մեջ ձգված բավականին բարդ հասարակական գործընթաց, քանի որ բնակավայրերի ձևավորման համար անհրաժեշտ են բազմաթիվ գործոնների համադրում, որոնց մեջ առանձնահատուկ կարևորություն ունեն կրթական հաստատությունները: Դրանց համայնքաստեղծ նշանակությունը, հասարակության զարգացմանը զուգընթաց, միշտ աճել է և այսօր՝ բնակավայրի պահպանման գործում դարձել՝ վճռորոշ:

Հիմք ընդունելով մասնագիտական վերոնշյալ դիտարկումները, կարող ենք պնդել, որ դպրոցների փակման այս գործընթացի հետևանքով հիմնավոր են դառնում բնակավայրերի դատարկման ու տարածքների ամայացման վերաբերյալ կանխատեսումները: Շեշտադրենք, որ այս գործընթացը հատակապես թիրախավորել է հանրապետության տարաբնակեցման համակարգի լեռնային ու բարձրլեռնային գոտիները, որոնք համակարգի լիարժեքության ապահովման կարևորագույն շերտերն են (փակման ենթակա դպրոցներից 41-ը հանդիսանում է բարձրլեռնային, իսկ 108-ը՝ լեռնային բնակավայրերի դպրոցը *գծապատկեր 4, 5*):

Ընդհանրացնելով՝ եզրակացնենք, որ ՀՀ-ում դպրոցների փակման գործընթացի մասշտաբայնությունը, միաժամանականությունը և լեռնային ու բարձրլեռնային գոտիների հստակ թիրախավորվածությունը կարող է ամբողջապես փլուզել ՀՀ տարաբնակեցման համակարգի կենսունակությունը: Քանի որ, անխուսափելի է լինելու տարածքային կառավարման կորուստը, երբ ամայացող տարածքները դառնալով վարչական «չեզոք գոտիներ»՝ դժվարացնելու են վարչական, հարկային, տնտեսական, օրենսդրական միասնական քաղաքականության իրականացումը: Նույնիսկ բնական աղետների դեպքում (հրդեհ, սելավ) օգնություն կազմակերպելն անհնար է դառնում:

Դ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ – ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՉՆԱՑՄԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔ

Դպրոցների փակման գործընթացը ՀՀ-ում չի սահմանափակվում միայն կրթական համակարգով, այլ ունի խորքային սոցիալ-տնտեսական հետևանքներ, որոնք առավել սուր են արտահայտվում հատկապես լեռնային ու բարձր լեռնային բնակավայրերում: Դպրոցը տվյալ համայնքում կատարում է ոչ միայն կրթական, այլև տնտեսական, սոցիալական և համակարգող դեր, և դրա լուծարումը գործարկում է սոցիալ-տարածական քայքայման-դեգրադացիայի բազմաշերտ մեխանիզմներ:

- Աշխատաշուկայի խաթարում և եկամտի կորստի շղթայական ազդեցություն

Փակման ենթակա դպրոցների հետ միաժամանակ ձևավորվելու է աշխատատեղերի զանգվածային կորուստ: Մասնավորապես՝ Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում

հարյուրավոր ուսուցիչներ և տեխնիկական անձնակազմ դուրս են մղվելու աշխատանքային շուկայից: Դրա հետևանքով բարձրանալու է գործազրկության մակարդակը ոչ դիվերսիֆիկացված տնտեսություն ունեցող գյուղերում, նվազելու է բնակչության վճարունակությունը, կրճատվելու է տեղական սպառումը, ի վերջո տապալվելու է տեղական փոքր բիզնեսների կենսունակությունը:

Այսինքն, դպրոցի փակումը համայնքում տնտեսական շոկի դեր է կատարելու, քանի որ գյուղերը զուրկ են աշխատատեղերի փոխհատուցման այլընտրանքային մեխանիզմներից:

- Գյուղատնտեսական հողերի տնտեսական գործառույթների կորուստ

Դատարկվող գյուղերի հետևանքով տնտեսական շրջանառությունից դուրս են մնալու հսկա ծավալի գյուղատնտեսական հողատարածքներ: Սրա անխուսափելիությունը բացատրվում է երեք փոխկապակցված գործոնով՝ հնարավոր արտագաղթի հետևանքով աշխատուժի բացակայություն, հողօգտագործողների տարիքի մեծացում և ինստիտուցիոնալ կառավարման բացակայություն:

Բնակչության հեռացմամբ գյուղատնտեսական հողերն աստիճանաբար վերածվելու են անմշակ տարածքների, ինչը հանգեցնելու է ոչ միայն արտադրության կրճատման, այլև տարածքային դեգրադացիայի: Այս գործընթացը ունի համակարգային բնույթ և արտահայտվում է հետևյալ կերպ՝

- ✓ նվազում է ազգային պարենային պոտենցիալը,
- ✓ խաթարվում է հողերի վերարտադրողականությունը,
- ✓ խափանվում են ոռոգման համակարգերը,
- ✓ դադարում է անասնապահական տնտեսությունների գործունեությունը:

Դպրոցը գյուղական բնակավայրում հանդիսանում է ոչ ուղղակի, բայց վճռորոշ գործոն գյուղատնտեսական ներուժի պահպանման գործում, քանի որ այն ապահովում է բնակչության մնալու «սոցիալական հիմքը»:

- Տնտեսական կենտրոնացման ուժեղացում և տարածքային անհամաչափ զարգացում

Դպրոցների փակման գործընթացը հանգեցնելու է քաղաքներում տնտեսական գերկենտրոնացման, հատկապես Երևանում, որը ՀՀ ներքին միգրացիայի գլխավոր թիրախն է:

Այս գործընթացն էլ ավելի է խորացնելու ՀՀ տարածքային տնտեսական բևեռացումը՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական խիստ անհամաչափությունը, ձևավորելով «տնտեսապես դատարկ գոտիներ», որոնք ներդրումային առումով դառնում են անպիտանի:

- Սոցիալական կապիտալի քայքայում և համայնքային ինստիտուցիոնալ անկում

Դպրոցը համայնքի ներսում հանդես է գալիս որպես սոցիալական միասնականացման առանցքային ինստիտուտ: Դրա վերացումը հանգեցնում է համայնքային կյանքի պարալիզացման, ծնող-մանկավարժ-համայնք փոխգործակցության խզման, համայնքի ինքնակազմակերպման ունակության անկման:

Բացի դրանից, այս գործընթացի հետևանքով խզվելու է սոցիալական փորձի փոխանակման շղթան: Գյուղական դպրոցները հաճախ հանդիսանում են տեղական գյուղատնտեսական գիտելիքների, պրակտիկաների, ավանդույթների փոխանցման անուղղակի կենտրոն (օրինակ՝ դպրոցական այգիներ, տեղական ավանդույթների ուսումնասիրություն): Դրանց փակումը խաթարում է կուտակված փորձի ամիջական փոխանցման հնարավորությունը:

Այս ամենի հետևանքով, ոչնչացման վտանգի տակ են հայտնվելու գյուղերի մշակութային ինքնատիպությունները՝ տեղական բարբառներ, կենցաղավարություն և այլն:

Այս պայմաններում գյուղը վերածվելու է ֆիզիկապես գոյություն ունեցող, սակայն սոցիալապես չգործող տարածքի:

- Երկարաժամկետ մակրոտնտեսական սպառնալիքներ

Գյուղատնտեսությունն ունի ռազմավարական նշանակություն Հայաստանի տնտեսության համար, սակայն դպրոցների փակման հետևանքով գյուղական տարածքների հնարավոր ամայացումը կունենա մակրոտնտեսական կոնկրետ հետևանքներ.

- ✓ սննդային կախվածության ավելացում,
- ✓ ներմուծման ծավալների աճ,
- ✓ գյուղատնտեսական արտահանման պոտենցիալի կորուստ,
- ✓ բյուջետային ծանրաբեռնվածության աճ՝ սոցիալական վճարների հաշվին:

Այս ամենը երկարաժամկետ կտրվածքով նվազեցնում է Հայաստանի տնտեսական ինքնիշխանության մակարդակը:

Ամփոփմամբ հավելենք, որ սոցիալ-տնտեսական մակարդակում դպրոցների փակումը հանդես է գալիս որպես տնտեսական դեգրադացիայի արագացուցիչ: Այն ոչ միայն ոչնչացնելու է աշխատատեղերը, այլ նաև զրկելու է երկիրը տարածքային արտադրական ներուժից:

Գյուղատնտեսական հողերի դուրս մղումը տնտեսական շրջանառությունից վտանգավոր է ոչ միայն մարզային զարգացման, այլ ամբողջ պետության տնտեսական անվտանգության համար:

Ե. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ – ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՄՊՈՆԱԼԻՔ

ՀՀ-ում դպրոցների լուծարման հետևանքների բազմաչափ մոդելավորման թերևս կարևորագույն բաղադրիչը, որ նաև ամբողջացնում է մոդելավորումը, պետք է համարել ազգային անվտանգության ոլորտը, որովհետև երկարաժամկետ, և նույնիսկ՝ միջնաժամկետ հեռանկարում այն անխուսափելիորեն առաջ է բերելու պետականության գոյատևման սպառնալիքներ: Այդ իսկ պատճառով ազգային անվտանգության համատեքստում դպրոցների փակման գործընթացի հետևանքների ամբողջական բացահայտման համար առանձնացրել ենք մի քանի շերտեր.

1. Տարածքների ապարնակեցում՝ խոցելի անվտանգություն.

Պետական անվտանգության վերաբերյալ գիտական և պրակտիկ ժամանակակից մոտեցումներում տարածքային անվտանգությունը դիտարկվում է որպես բնակչության կայուն տեղաբաշխման ու պետական միջավայրի համադրություն: Բնակավայրի դատարկումը ենթադրում է ոչ միայն սոցիալական խնդիր, այլև անվտանգության նվազում, քանի որ նվազում է մարդկային ներկայությունը, սոցիալական վերահսկողությունը և տարածքի հասարակական ներուժը:

Հետևաբար, հատկապես սահմանամերձ բնակավայրերում դպրոցի փակմամբ պայմանավորված հնարավոր արտագաղթը, խաթարելու է այդ տարածքների բնական բնակեցվածությունն ու ֆիզիկական անվտանգությունը:

Այս գործընթացը կարժամակետ հեռանկարում առաջացնելու է սահմանների ուղղակի ֆիզիկական վերահսկողության թուլացում, քանի որ սահմանամերձ գյուղերը հանդիսանում են «կենդանի սահմանապակետեր»: Դրանց ամայացումը ենթադրում է սահմանների վերահսկողության տեղեկատվական վակուում (ոչ միայն պաշտոնական սահմանապահները, այլև տեղացիներն են սահմանի մշտական «աչքերն ու ականջները»): Այսինքն, սահմանների երկայնքով կառաջանան թույլ պաշտպանված հատվածներ, որտեղ սահմանային խախտումները կարող են աննկատ մնալ:

Միջնաժամկետ հեռանկարում, եթե Հայաստանի սահմանամերձ գյուղերը դատարկվեն, դա կարող է ստեղծել արդեն «դեմոգրաֆիկ վակուում», որը պատմականորեն թշնամի պետությունների կողմից օգտագործվելու է իրենց տարածքային հավակնությունները հիմնավորելու փաստարկ:

Երկարաժամկետ հեռանկարում այս գործընթացն աստիճանաբար ոչնչացնում է բնակավայրի սոցիալական կառուցվածքը և թուլացնում է տվյալ տարածքի նկատմամբ բնակչության պատկանելիության զգացումը: Պատկանելիության թուլացումը կարող է վերաճել տարածքային անտարբերության, որը անվտանգության տեսանկյունից դիտարկվում է սպառնալիք:

2. Պետական ներկայության նվազում և տարածքային խոցելիություն

Դպրոցը փոքր բնակավայրերում հանդիսանում է պետական ինստիտուցիոնալ ներկայության առավել կայուն հանգույցներից մեկը: Այն իրականացնում է ոչ միայն կրթական, այլև համայնքային համախմբման, տեղեկատվական շրջանառության և տեղական կառավարմանը զուգահեռ գործառույթներ: Այսինքն, տարածքային անվտանգության տեսանկյունից, բնակավայրում դպրոցի առկայությունը գործում է որպես պետական շարունակականության՝ պետական կառավարման ֆիզիկական ներկայության ապահովման գործոն: Դպրոցը հանդես է գալիս ոչ միայն որպես կրթական հաստատություն, այլև որպես հանրային տարածք, որի միջոցով ապահովվում է հասարակություն–պետություն փոխգործակցության կայուն կապը:

Երբ տվյալ հաստատությունը փակվում է, համայնքը կորցնում է պետական մարմինների հետ առօրյա շփման կարևորագույն հարթակներից մեկը: Արդյունքում

նվագում է պետության ֆիզիկական ներկայության տեսանելիությունն ու ընկալվող ամբողջությունը: Սա հատկապես ընդգծվում է սահմանային տարածքներում, որտեղ պետական հաստատությունների նվագման յուրաքանչյուր դեպք կարող է ընկալվել որպես վերահսկողության թուլացում, որը կարճաժամկետ հեռանկարում կարող է վերածվել անվտանգային սպառանալիքի: Իսկ, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, ՀՀ-ում դպրոցների փակման գործընթացի առաջնային թիրախներից մեկը՝ ՀՀ սահմանամերձ փոքր բնակավայրերն են, ապա հստակ են դառնում այս գործընթացի անվտանգային սպառալիքները:

Վերջում հավելենք, որ խնդիրն առավել լուրջ է՝ Սյունիքի մարզի՝ Կապան, Վայոց Ձորի մարզի՝ Վայք, Գեղարքունիքի մարզի՝ Վարդենիս տարածաշրջանների կտրվածքով, որոնց նկատմամբ Արդբեջանի տարածքային հավակնությունները թաքնված չեն:

3. Սահմանային կայունություն և ինստիտուցիոնալ խտություն

Տարածքային անվտանգության ժամանակակից մոտեցումները ցույց են տալիս, որ սահմանների ամբողջությունը չափվում է ոչ միայն ռազմական ներկայությամբ, այլև բնակավայրերի կենսունակությամբ: Սահմանամերձ բնակավայրը, որն ունի դպրոց, բուժկետ, և գործառնական ենթակառուցվածքներ, դիտարկվում է որպես «կյանքով զբաղեցված սահման», մինչդեռ դատարկվող տարածքը՝ որպես «ստատիկ սահման»:

Սահմանամերձ գյուղերում դպրոցի փակումը բերում է ինստիտուցիոնալ խտության նվազման, որի հետևանքով նվագում է տարածքի «կենսունակության ինդեքսը»: Սա նշանակում է, որ տարածքը շարունակում է գոյություն ունենալ քարտեզի վրա, սակայն կորցնում է իր գործառնական բովանդակությունը:

Սույն երևույթը կարող է դիտարկվել որպես սահմանային գոտում տարածքային կայունության նվազում:

4. Տարածքային ինքնության և հայրենակցական կապերի թուլացում

Դպրոցը նաև ազգային ինքնության ձևավորման կարևորագույն սոցիալական ինստիտուտ է: Սահմանամերձ բնակավայրերում դպրոցը ոչ միայն կրթական միջավայր է, այլև մշակութային ինքնության պահպանման հանգույց:

Դպրոցի բացակայության պարագայում երեխան և ընտանիքը ստիպված է տեղափոխվել այլ տարածաշրջան, ինչի արդյունքում տեղի է ունենում ոչ միայն ֆիզիկական, այլև արժեքահամակարգային խզվածք: Երիտասարդ սերունդը աստիճանաբար կորցնում է տվյալ տարածքին առնչվող ինքնագիտակցումը, ինչը երկարաժամկետ կտրվածքով կարող է բերել տարածքի «հոգեբանական դատարկման» և ազգային անվտանգության խոցելիության:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Մույն հետազոտությունը, հիմնված լինելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2023 թ. սեպտեմբերի 11-ի թիվ 1719-Ա/2 հրամանի, ինչպես նաև ՀՀ կառավարության տարածքային դասակարգման որոշումների և emis.am հարթակի տվյալների բազայի վրա, փաստագրում և գիտականորեն հիմնավորում է, որ Հայաստանի Հանրապետությունում նախատեսվող 231 հանրակրթական դպրոցի փակման գործընթացը կրում է ոչ միայն կրթական, այլև համապետական բազմաշերտ ռիսկեր ու սպառնալիքներ պարունակող բնույթ:

Գործընթացի ընդհանուր վերլուծությունը ցույց է տվել, որ լուծարվող դպրոցների շուրջ 94.5 տոկոսը տվյալ բնակավայրում միակ գործող դպրոցներն են, ինչը նշանակում է տվյալ համայնքի կրթական ենթակառուցվածքի ամբողջական կորուստ: Փաստացի, փակման է ենթակա ՀՀ դպրոցների ընդհանուր թվի շուրջ 16,6 տոկոսը, կամ յուրաքանչյուր վեցերորդ դպրոցը, իսկ գյուղական բնակավայրերի պարագայում՝ արդեն յուրաքանչյուր երրորդ դպրոցը: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ընդգծում է, որ դպրոցների լուծարման քաղաքականությունը համակարգված կերպով թիրախավորում է Հայաստանի գյուղական, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը:

Տարածական վերլուծությունը փաստում է, որ փակման ենթակա դպրոցների մեծ մասը կենտրոնացած է երեք ռազմավարական կարևոր մարզերում՝ Սյունիք, Շիրակ և Լոռի, որոնց բաժին է ընկնում փակվող դպրոցների 2/3-ը: Այս նույն մարզերն առանձնանում են նաև կրճատման ենթակա ուսուցիչների ու օժանդակ անձնակազմի ամենաբարձր ցուցանիշներով, ինչը բարձրացնում է ոչ միայն կրթական ոլորտի, այլև՝ սոցիալ-տնտեսական, ֆիզիկական անվտանգության և մշակութային կայունության համակարգային վատթարացման հավանականությունը:

Հետազոտության առանցքային և առավել մտահոգիչ արդյունքներից է այն փաստը, որ փակման ենթակա դպրոցների զգալի մասը գտնվում է սահմանամերձ բնակավայրերում (55 դպրոց), լեռնային (108 դպրոց) և բարձր լեռնային (41 դպրոց) գոտիներում: Ըստ այդմ, «լեռնային» կարգավիճակ ունեցող բնակավայրերի շուրջ 57,7 տոկոսի միակ դպրոցները կլուծարվեն, իսկ «բարձր լեռնային» բնակավայրերում այս ցուցանիշը կազմում է մոտ 22,5 տոկոս: «Սահմանամերձ» բնակավայրերում յուրաքանչյուր երրորդ համայնք վտանգվում է կրթական կառույցի լիակատար կորստով:

Այս տվյալները փաստում են, որ գործընթացը հղի է Հայաստանի տարածքային ամբողջականության, սահմանի վերահսկելիության և բնակչության տարաբնակեցման համակարգային խաթարման սպառնալիքներով: Հատկապես Սյունիքի մարզի պարագայում, որտեղ փակման ենթակա դպրոցների ավելի քան կեսը սահմանամերձ բնակավայրերում են, կրթական համակարգի կազմաքանդումը կարող է անմիջականորեն ազդել սահմանային անվտանգության վրա՝ խթանելով բնակչության արտահոսքն ու սահմանային տարածքների ամայացումը:

Ժողովրդագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ փակվող դպրոցների բնակավայրերում բնակվում է շուրջ 70 հազար բնակիչ, որոնց զգալի մասը հայտնվում է ներքին միգրացիայի կամ արտագաղթի ռիսկային խմբում: Մի շարք մարզերում՝ Սյունիքում, Շիրակում, Լոռիում և Տավուշում, դպրոցների փակման ազդեցության տակ հայտնվում է գյուղական բնակչության 20–30 տոկոսը, ինչն արդեն ունի համապետական ժողովրդագրական ճգնաժամ սրելու ներուժ:

Սոցիալ-տնտեսական տեսանկյունից դպրոցների լուծարումը հանգեցնում է զանգվածային գործազրկության՝ հազարավոր ուսուցիչների և հարյուրավոր սպասարկող անձնակազմի շրջանում: Մինևույն ժամանակ գյուղական համայնքներում դպրոցը հաճախ հանդիսանում է ոչ միայն կրթական, այլև վերջին կայուն աշխատատեղը: Դրա փակումը արագացնում է բնակավայրերի սոցիալ-տնտեսական դեգրադացիան և գյուղատնտեսական տարածքների ամայացումը:

Ընդհանուր առմամբ, կատարված վերլուծությունը հաստատում է, որ ՀՀ դպրոցների լուծարման ծրագրում գերակշռում է ֆինանսական օպտիմալացման պարզունակ տրամաբանությունը՝ անտեսելով կրթությունը որպես ազգային անվտանգության հիմնարար գործոն լինելու բացառիկ հանգամանքը: Զարգացման տարածաշրջանային անհամաչափությունների խորացումը, սահմանամերձ գոտիների դատարկումը, լեռնային շրջանների սոցիալ-տնտեսական անկումը կարող են միջնաժամկետ հեռանկարում հանգեցնել ազգային կայունության լուրջ խաթարման:

Հետևաբար, դպրոցների փակման գործող ծրագիրն անհրաժեշտ է վերանայել ոչ թե նեղ գերատեսչական հաշվարկների, այլ ազգային անվտանգային հայեցակարգի շրջանակում՝ հիմքում ունենալով տարածքային զարգացումը, ժողովրդագրական կայունությունն ու սահմանների պահպանման կենսունակությունը:

Սույն հետազոտությունը կարող է ծառայել որպես գիտա-տեսական հիմք՝

- դպրոցների փակման գործընթացը կասեցնելու համար (իրավական տիրույթ),
- կրթական ցանցի կեսունակության վերականգման նոր ռազմավարություն համար,
- սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի համար հատուկ պետական քաղաքականություն ձևավորելու համար: